2023, ՀՈԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 19 (639)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Կատարվեց աղոթքի հատուկ կարգ՝ ի զորակցություն Արցախի և արցախահայության

Հոկտեմբերի 1-ին՝ Արցախի համար համազգային աղոթքի օրը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Տրդատի բաց խորանում պատարագի սրբազան արարողությունից հետո կատարվեց աղոթքի հատուկ կարգ՝ ի զորակցություն Արցախի և արցախահայության:

Համազգային աղոթքի առիթով հավատացյալների երկրպագության և օրհնության համար դուրս բերվեց աստվածամուխ Սուրբ Գեղարդը:

Արարողության ընթացքում Հայոց Հայրապետը Սուրբ գեղարդով օրհնեց Հայաստան ու Արցախ աշխարհները և ներկա հավատացյալ ժողովրդին:

Աղոթքի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական ուղերձը հղեց համայն հայ ժողովրդին:

«Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Անսահման ցավով և խոր մտահոգությամբ են համակված բոլորիս հոգիները: Ծանր ու տագնապալի օրեր է ապրում ազգս հայոց: Այսօր, համախմբված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և հայոց եկեղեցիներում ի սփյուռս աշխարհի, աղոթք ենք բարձրացնում ի զորակցություն Արցախի մեր քույրերի ու եղբայրների, որոնք, ենթարկվելով սոսկալի տառապանքների ու անմարդկային զրկանքների, բռնել են գաղթի ճանապարհը: Հայաթափվում է Արցախ աշխարհը, վերստին որբանում սրբազան հողը հայոց:

Ազգային այս ողբերգության հանդիման ցավով ենք անդրադառնում, որ Ադրբեջանի զավթողական, ցեղասպանական գործողություններին աշխարհի անհամարժեք արձագանքը, Արցախի նկատմամբ Հայաստանի Հանրապետության իշխանությունների որդեգրած քաղաքականությունը և մեր ժողովրդի երկպառակությունը հանգեցրեցին Արցախի կորստյանը:

Այսօր Հայաստանի Հանրապետությունն է նույն սպառնալիքի առջև. անթաքույց խոսվում է ինքնիշխանության և պետականության կորստի վտանգների մասին: Անվտանգային մարտահրավերները, տարածքային կորուստները, ակնհայտ հարկադրանքի ներքո խաղաղության հաստատման գործընթացում դրսևորվող շտապողականությունը, ինչպես և հասարակության հետ իշխանության շփման կերպերը անվստահության մթնոլորտ են ձևավորել և արդար ընդվզում առաջ բերել, ինչն ստեղծված բարդ կացության մեջ կարող է ցավալի զարգացումների առաջնորդել:

Մեր հորդորն է պետական այրերին՝ նոր բաժանարար գծերով, անկշռադատ խոսքերով ու արտահայտություններով ատելություն չսերմանել, չմասնատել և չտկարացնել ժողովրդին: Առկա հիմնախնդիրներին արժանապատիվ հանգուցալուծում ապահովելու, հայրենիքը վտանգաշատ այս կացությունից դուրս բերելու համար հարկ է գործել սթափ, ճիշտ գնահատել աշխարհաքաղաքական իրողությունները և օրեցօր խորացող ճգնաժամի մեջ ի գործ դնել մեր ազգի փորձագիտական ողջ ներուժն ու փորձառությունը՝ չառաջնորդելու համար մեր երկիրը նոր կորուստների՝ հատկապես նկատի առնելով թշնամու հավակնություններն ու ռազմատենչ հռետորաբանությունը: Արցախյան արյունալի պատկերը վկայությունն է այն իրողության, որ անզուսպ են թշնամու զավթողական ձգտումները, և խտրություն չի դրվում միջոցների ընտրության հարցում:

Մեր հորդորն ենք ուղղում նաև ազգային, կրոնական, հասարակական, քաղաքական կառույցներին միավորելու մեր ժողովրդին ներկա ծանր մարտահրավերների հանդիման և համախմբված գործելու՝ հանուն մեր երկրի ապագայի երաշխավորման:

Սիրելի՛ ժողովուրդ, գոյաբանական սպառնալիքների առջև հրամայական են մեր համազգային միաբանությունն ու համախմբվածությունը, քանզի միասնականության մեջ է մեր զորությունը, միասնականության մեջ է գալիք աղետը կանխելու ուղին: Արդ, ապրենք ու գործենք սիրով, մեր կորուստների ցավը ձեռքբերումներ դարձնելու բարձր գիտակցությամբ, մեր կամքն ու ոգին վերածենք ազգային կյանքի իրական արթնության և հայրենիքի ու ժողովրդի իրավունքների պաշտպանության միաբան ուժի, մեր կյանքով վկայենք ճշմարիտ նվիրումը հայրենիքին, ազգին և դարերով փայփայված մեր անկախ պետականությանը:

Սիրելիներ, առկա դժվարին պայմաններում մենք՝ որպես ժողովուրդ, դարձել ենք, առաքյալի խոսքի համաձայն, «ամեն կողմից ճնշված, բայց ոչ ընկճված, կարոտյալ, բայց ոչ հուսահատ, հալածված, բայց ոչ լքված, չարչարված, բայց ոչ մեռած» (Բ Կորնթ. Դ 8): Արդարև, մեր հավատը, հույսը, հայրենասիրությունն ու ազգանվիրումը երբեք հնարավոր չէ սպանել: Այդ իսկ պատճառով հանուն Արցախի համազգային աղոթքը մեզ համար անհուսության աղոթք չէ, վշտի աղոթք չէ, տրտմության աղոթք չէ, այլ հույսի ու մխիթարության, վերհառնումի ու հարության աղոթք է: Համազգային այս աղոթքը թող գոտեպնդի մեզ, համախմբի մեզ որպես Աստծու սեփական ժողովուրդ՝ ազգի ու հայրենյաց հզորացման մեկ և նույն տեսիլքով: Այս պահը մեզ համար նաև առիթ է անդրադարձ կատարելու մեր կյանքի ընթացքին՝ հեռացնելու համար մեզանից հայրենադավ երևույթները, սրբագրելու սխալներն ու թերացումները, որպեսզի զորանանք որպես ազգ, պետություն ու եկեղեցի: Մեր հայրենյաց անգին նշխարը՝ Արցախ աշխարհը, մերն է ու մեր սրտում է, և Արցախի հայապատկան լինելու գիտակցությունը երբեք չի տկարանա սերունդների մեջ:

Սիրելի՛ բարեպաշտ զավակներ Մեր, միասնաբար աղոթենք Արցախի մեր ժողովրդի համար և ամեն կարելիությամբ նեցուկ և սատար լինենք տարագիր մեր քույրերին ու եղբայրներին՝ մխիթարելով իրենց ցավի ու նեղությունների մեջ և իրենց կեցության ու կարիքների համար անհրաժեշտ հոգածություն ցուցաբերենք:

Արցախցի սիրելի՛ զավակներ, ձեզ հատուկ քաջարի ոգով ամուր ու տոկուն եղեք, հաստատուն մնացեք ձեր հավատի ու հույսի մեջ, շարունակեք ապրել ու արարել՝ չընկրկելով դժվարությունների առջև, և մշտարթուն պահեք ձեր սերն Արցախի և հայրենական ավանդների նկատմամբ: Համայն մեր ժողովուրդը և եկեղեցին ձեզ հետ են և այս տառապալի օրերին պատրաստակամ հանձնառություններով զորակից ձեզ:

Համազգային աղոթքի այս օրը, ի զորակցություն Արցախի մեր զավակների, Հայաստանի մի շարք եկեղեցիներում զետեղված են սրբազան մասունքներ՝ հավատացյալների երկրպագության և ջերմեռանդ աղոթքի համար: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եկող ուխտավորներիդ համար դուրս է բերվել քրիստոսամուխ Սուրբ գեղարդը՝ որպես նշան մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի սոսկալի չարչարանքների և հաղթական հարության: Սուրբ գեղարդի զորությամբ մեր ժողովուրդը վերապրել է արհավիրքներ, կոտորածներ ու ցեղասպանություն, ամուր պահել հավատքը անհուսության մեջ, անհավատության մեջ վերածնել հույսը և բարու հանդեպ սերը դարձրել չարի դեմ պայքար:

Այս վստահությամբ մեր աղոթքը վերառաքենք առ Աստված՝ ասելով. «Տեր Աստված, պարգևիր մեզ Քո օրհնությունը և փրկիր վտանգներից ու փորձություններից: Տուր զորությունը չարի հարձակումներին դիմակայելու, հարվածներից վեր հառնելու: Մշտավառ պահիր մեր կյանքում հարության երկնահեղ լույսը և պահպանիր մեզ Քո Սուրբ Աջի հովանու ներքո: Քո խնամքի և օրհնության մեջ պահիր Քեզ միշտ հավատարիմ, բռնագաղթի տառապանաց և նեղությունների ճանապարհով անցնող արցախցի մեր քույրերին ու եղբայրներին: Հանգստություն շնորհիր հայրենյաց պաշտպանության համար զոհվածների հոգիներին, ապաքինում՝ վիրավորներին ու նեղյալներին, և ազատություն՝ գերեվարված մեր զավակներին: Բարերար և ամենազոր Աստված, ավելացրու մեզանում հավատքը, հույսն ու սերը, որպեսզի ապրենք Քո կամքի համաձայն և մշտահունչ աղոթքով հայցենք խաղաղություն համայն աշխարհին ու մեր հայրենիքին, բարօրություն ու ապահովություն աշխարհասփյուռ մեր ժողովրդին՝ անդադար փառաբանելով Ամենասուրբ Երրորդությանդ»:

Թող Փրկիչ մեր Տիրոջ շնորհը, սերն ու խաղաղությունը լինեն մեզ հետ և ամենքի այսօր և միշտ և հավիտյանս. Ամեն»:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Հոկտեմբերի 2-ին

Լիբանանի Հանրապետության սոցիալական հարցերի նախարարին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Լիբանանի Հանրապետության սոցիալական հարցերի նախարար Հեկտոր Հաջջարին:

Հանդիպմանը ներկա էին նաև Լիբանանի Հանրապետության երիտասարդության և սպորտի նախկին նախարար Վարդիներ Օհանյանը և Հայաստանում Լիբանանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան տիկին Մայա Դաղերը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ողջունելով նախարարի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, իր գնահատանքը հայտնեց սոցիալական ոլորտում Հայաստանի հետ գործակցության համար:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն անդրադարձավ ադրբեջանական իշխանությունների որդեգրած ցեղասպան քաղաքականությանը, որի արդյունքում հայաթափվեց Արցախը: Նորին Սրբությունը խոր մտահոգությամբ ընդգծեց, որ բռնի տեղահանված արցախահայությունը հայտնվել է սոցիալական ծանր կացության մեջ: Ստեղծված այս իրավիճակում Հայոց Հայրապետը հատկապես կարևորեց տեղահանված հայորդիների կեցության, կրթական խնդիրների, աշխատանքի ապահովման առաջնահերթությունները: Այս առնչությամբ Նորին Սրբությունը նշեց, որ Հայոց Եկեղեցին, ըստ ամենայնի, փորձում է իր օգտակարությունը բերել կորուստների, ցավի ու նեղությունների մեջ հայտնված արցախահայությանը և հնարավորության սահմաններում անհրաժեշտ հոգածությունը ցուցաբերում իրենց կեցության ու կարիքների բավարարման հարցում:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը, խոսելով Ադրբեջանի կողմից հայկական հոգևոր, մշակութային ժառանգության ոչնչացման փաստերի մասին, կարևորեց հետևողական ջանքերի ներդրումը դրանց պահպանման գործում:

Հայոց Հովվապետն իր երախտագիտությունը հայտնեց Լիբանանի իշխանություններին և ժողովրդին՝ ցեղասպանությունը վերապրած հայորդիներին իրենց երկրում ապաստան տալու և Հայաստանին մշտապես աջակցելու համար:

Իր հերթին նախարար Հեկտոր Հաջջարն ընդգծեց, որ Լիբանանը ևս անցել է նմանատիպ մարտահրավերների միջով և պատկերացնում է Հայաստանի առջև ծառացած խնդիրները: Պարոն Հաջջարը տեղեկացրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ իր այցը նպատակ է հետապնդում ծանոթանալու Արցախից բռնի տեղահանված հայերի սոցիալական խնդիրներին և հնարավորինս աջակցելու դրանց հաղթահարմանը:

Հոկտեմբերի 2-ին

ԱՄՆ հայոց արևելյան և արևմտյան թեմերի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց արևելյան և արևմտյան թեմերի ուխտավորներին՝ ուղեկցությամբ ԱՄՆ հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ վրդ. Պարսամյանի:

Հայր սուրբը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, ընդգծեց, որ ուխտավորներն ամենայն հայոց հոգևոր կենտրոն են ժամանել իրենց ուխտը Սուրբ Էջմիածնում նորոգելու և իրենց զորակցությունը բերելու հայ ժողովրդին այս ծանր օրերին:

Իր սերն ու օրհնությունը բերելով հայորդիներին՝ Վեհափառ Հայրապետը կարևորեց աշխարհասփյուռ հայոց թեմերից նման ուխտագնացությունների կազմակերպումը հատկապես հայրենիքի համար այս դժվարին ժամանակաշրջանում, ինչը հնարավորություն է ընձեռում հաղորդ դառնալու Հայաստանի և բռնի տեղահանված արցախահայության առջև ծառացած մարտահրավերներին:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաև Արցախից բռնի տեղահանված հայորդիներին Մայր Աթոռի կողմից ցուցաբերվող աջակցության և Արցախի հոգևոր, մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված աշխատանքներին:

Նորին Սրբությունը, կարևորելով Սփյուռքի դերակատարությունը, հորդորեց ԱՄՆ-ի հայ ուխտավորներին իրենց երկրում բարձրաձայնել Արցախի հոգևոր, մշակութային ժառանգության պահպանության խնդիրը և հետևողական ջանքեր գործադրել այդ ուղղությամբ:

Իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև պատգամեց ուխտավորներին զորակից լինել Հայաստանին, հայրենազրկված արցախցիներին և ջանք ու ճիգ չխնայել ի նպաստ հայրենիքի շենացման ու զորացման:

Հոկտեմբերի 3-ին

Բրազիլիայի հայոց թեմի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բրազիլիայի հայոց թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ Բրազիլիայի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Բերբերյանի:

Սրբազան հայրը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, նշեց, որ բրազիլահայ ուխտավորներն այցելել են Հայաստանի տարբեր սրբավայրեր և հաղորդ դարձել հայկական հոգևոր, մշակութային ժառանգությանը:

Իր օրհնությունը բերելով հայորդիներին՝ Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց թեմական առաջնորդի ու թեմի հոգևոր սպասավորների ծառայությունը, ինչպես և հայորդիներին հայրենիք ուխտագնացության առաջնորդելու հանձնառությունը: Հանդիպմանը Հայոց Հովվապետն անդրադարձավ բռնի տեղահանված արցախահայության առջև ծառացած դժվարություններին ու մարտահրավերներին՝ ընդգծելով, որ Հայոց Եկեղեցին իր գործուն աջակցությունն է ցուցաբերում արցախահայությանը՝ հաղթահարելու առաջացած սոցիալական դժվարին խնդիրները:

Այս առնչությամբ Նորին Սրբությունը հորդորեց ուխտավորներին իրենց նպաստը բերել Արցախի հայկական հոգևոր, մշակութային ժառանգության պահպանության, ինչպես նաև հայրենազրկված հայորդիների կարիքների հոգածության գործում:

Հոկտեմբերի 4-ին

Հունաստանի հայոց թեմի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունաստանից ժամանած հայ ուխտավորներին՝ ուղեկցությամբ Հունաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Խորեն վրդ. Առաքելյանի:

Վեհափառ Հայրապետը, իր հայրական օրհնությունը փոխանցելով ուխտավոր հայորդիներին, վստահություն հայտնեց, որ հայրենիքից ստացած հոգևոր լիցքերով և վերանորոգված հոգով ու սրտով կվերադառնան իրենց երկիր՝ առավել նախանձախնդրությամբ լծվելու հայրենաշինության գործին:

Անդրադառնալով հայրենազրկված արցախահայության սոցիալական ծանր կացությանը, հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերներին, Արցախի հայկական հոգևոր, մշակութային ժառանգության պահպանման խնդիրներին՝ Նորին Սրբությունը դրանց հաղթահարման և լուծման գործում կարևորեց ազգային ներուժի համախմբումն ու համահայկական միասնական ջանքերի գործադրումը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև իր գնահատանքը հայտնեց ուխտավոր հայորդիներին իրենց համայնքներում ազգային ինքնությունը, հավատքը և նախնյաց ավանդած սրբազան ժառանգությունն ու արժեքները պահպանելու համար:

➥ էջ 3

↩ էջ 2

Հոկտեմբերի 5-ին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Քենթրբերիի արքեպիսկոպոսին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հյուրընկալեց Անգլիկան Եկեղեցու առաջնորդ, Քենթրբերիի արքեպիսկոպոս Նորին Սրբազնություն Ջասթին Ուելբիին:

Ողջունելով Քենթրբերիի արքեպիսկոպոսի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունը կարևորեց Անգլիկան Եկեղեցու առաջնորդի ուղևորությունը տարածաշրջան, ինչը հնարավորություն կընձեռի ամբողջական պատկերացում կազմելու տիրող իրավիճակի վերաբերյալ և իր նպաստը բերելու մեր ժողովրդի արդար իրավունքների պաշտպանության գործում:

Հանդիպմանը Հայոց Հովվապետն անդրադարձավ Արցախից բռնի տեղահանված հայորդիների առջև ծառացած մարտահրավերներին, գերիների վերադարձման, Արցախի հոգևոր մշակութային ժառանգության պահպանման և Հայաստանի անվտանգային խնդիրներին: Նորին Սրբությունը մտահոգությամբ ընդգծեց նաև, որ այսօր էլ շարունակվում է ադրբեջանական ագրեսիան Հայաստանի ինքնիշխան տարածքների նկատմամբ: Իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ արձանագրեց, որ երկու Եկեղեցիների միջև առկա ջերմ հարաբերությունները փաստված են պատմական հարուստ վկայություններով՝ հաստատելով նաև, որ Անգլիկան Եկեղեցին դժվարին պահերին եղել է հայ ժողովրդի կողքին:

Քենթրբերիի արքեպիսկոպոս Ջասթին Ուելբիին, անդրադառնալով Հայաստանի առջև ծառացած մարտահրավերներին, իր զորակցությունը բերեց Ամենայն Հայոց Հայրապետին և հավաստիացրեց, որ հայ ժողովուրդը միայնակ չէ: Նորին Սրբազնությունը, վկայակոչելով հայ ժողովրդի հերոսական անցյալը, ընդգծեց, որ Լայ ժողովուրդի զավակներն առ Աստված իրենց հավատարմությամբ կկարողանան հաղթահարել բոլոր դժվարություններն ու փորձությունները: Քենթրբերիի արքեպիսկոպոսը կարևորեց նաև միասնական ջանքերի ներդրումն ի նպաստ տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատման:

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն առանձնազրույց ունեցավ Քենթրբերիի արքեպիսկոպոսի հետ:



Հոկտեմբերի 9-ին

Իրաքի հայոց թեմի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրաքահայ ուխտավորներին՝ ուղեկցությամբ Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Օշական եպս. Գյուլգյուլյանի:

Սրբազան հայրը, հայցելով Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը, ներկայացրեց ուխտավոր հայորդիներին:

Այնուհետև իր սերն ու օրհնությունը փոխանցելով ուխտավորներին՝ Նորին Սրբությունը շնորհավորեց իրաքահայերին՝ իրենց առաջնորդի եպիսկոպոսական աստիճանի արժանանալու առիթով: Հայոց Հովվապետը համոզմունք հայտնեց, որ Օշական սրբազանը, աջակից ունենալով թեմի հոգևոր դասին, կենտրոնական վարչությանը, նորանոր ձեռքբերումներով կարդյունավորի իր առաջնորդական ծառայությունը: Հանդիպմանը Նորին Սրբությունը հորդորեց իրաքահայ ուխտավորներին առավել նախանձախնդրությամբ ապրել ազգային-հոգևոր արժեքներով, պահպանել իրենց ազգային ինքնությունը, ամեն ջանք ի գործ դնել զորացնելու համար հայ համայնքը և իրենց օգտակար ծառայությունը բերել ազգին, հայրենիքին և Եկեղեցուն:

Հոկտեմբերի 7-ին

ԱՄՆ արևմտյան և Ֆրանսիայի հայոց թեմերի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ արևմտյան և Ֆրանսիայի հայոց թեմերի ուխտավորներին՝ ուղեկցությամբ Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգոր վրդ. Խաչատրյանի:

Հայր սուրբը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, ներկայացրեց ուխտավորներին և ընդգծեց, որ հայրենիք են ժամանել նաև իրենց զորակցությունը բերելու հայ ժողովրդին այս ծանր օրերին:

Իր սերն ու օրհնությունը փոխանցելով հայորդիներին՝ Վեհափառ Հայրապետը կարևորեց աշխարհասփյուռ հայոց թեմերից հայորդիների ուխտավորաբար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելությունները հատկապես Հայաստանի համար այս դժվարին ժամանակաշրջանում, ինչը հնարավորություն է ընձեռում նրանց հաղորդ դառնալու հայրենիքում առկա մարտահրավերներին և բռնի տեղահանված արցախահայության խնդիրներին:

Հանդիպմանը Հայոց Հովվապետն անդրադարձավ հայրենազրկված արցախցիների առջև ծառացած դժվարություններին՝ ընդգծելով, որ Հայոց Եկեղեցին ևս իր գործուն աջակցությունն է ցուցաբերում դրանց հաղթահարման գործում:

Իր խոսքում Նորին Սրբությունն ուխտավորներին հորդորեց իրենց երկրներում բարձրաձայնել Արցախի հայկական հոգևոր, մշակութային ժառանգության պահպանության խնդիրը և հետևողական ջանքեր գործադրել այդ ուղղությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև իր գնահատանքը հայտնեց ուխտավոր հայորդիներին հայրենիքի և Հայ Եկեղեցու նկատմամբ դրսևորվող նվիրումի և անսակարկ սիրո համար:

Հոկտեմբերի 9-ին

Նորաօծ եպիսկոպոսներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նորաօծ սրբազան հայրերին՝ Տ. Օշական եպս. Գյուլգյուլյանին, Տ. Թեոդորոս եպս. Զաքարյանին, Տ. Մեսրոպ եպս. Պարսամյանին, Տ. Կորյուն եպս. Բաղդասարյանին և Տ. Կիրակոս եպս. Դավթյանին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր հայրական սերն ու օրհնությունը բերելով եկեղեցականներին, շնորհավորեց վերջիններիս եպիսկոպոսական աստիճանի արժանանալու առիթով և մաղթեց արդյունավոր առաքելություն՝ ի պայծառություն Առաքելական Սուրբ Եկեղեցու և ի շինություն հայրենիքի:

Նորին Սրբությունը հորդորեց սրբազան հայրերին հաստատուն պահել իրենց ուխտը, ամեն ջանք ու ճիգ ներդնել իրենց ծառայության վայրերում ազգային-հոգևոր կյանքը զորացնելու, հավատ և հույս ներշնչելու հայորդիներին առկա դժվարին փորձությունները հաղթահարելու ճանապարհին: Վերջում Հայոց Հայրապետը նորաօծ եպիսկոպոսների հետ միասին աղոթք բարձրացրեց առ Աստված՝ հայրենիքի խաղաղության և անվտանգության, արցախահայության ու աշխարհասփյուռ հայորդիների բարօր կյանքի և Հայոց Եկեղեցու պայծառության համար:

Սուրբ Աթոռի առաքելական նվիրակին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրաժեշտի հանդիպում ունեցավ Անդրկովկասում իր առաքելությունն ավարտող Սուրբ Աթոռի առաքելական նվիրակ արքեպիսկոպոս Ժոզե Ավելինո Բետանկուրի հետ:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով առաքելական նվիրակին, իր բարձր գնահատանքը հայտնեց վերջինիս՝ երկու Աթոռների փոխհարաբերությունների առավել սերտացմանն ուղղված ջանքերի համար, և մաղթեց նորանոր ձեռքբերումներ հետագա սրբազան առաքելության մեջ:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ հաստատեց, որ Մայր Աթոռի և Վատիկանի միջև ձևավորվել են ջերմ և եղբայրական հարաբերություններ, որոնց վառ ապացույցներն են Հռոմի Սրբազան Քահանայապետերի՝ Հովհաննես-Պողոս Երկրորդի և Ֆրանցիսկոս Պապերի այցելությունները Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ինչպես և Հայոց Հայրապետի փոխադարձ այցելությունները Վատիկան, նաև՝ Սուրբ Աթոռում Հայոց ցեղասպանության 100-ամյակի առիթով կազմակերպված միջոցառումն ու Սուրբ Գրիգոր Նարեկացուն տիեզերական վարդապետ հռչակելը:

Իր խոսքում Հայոց Հովվապետն անդրադարձավ տարածաշրջանում առկա մարտահրավերներին, բռնի տեղահանված արցախահայության իրավունքների պաշտպանության ու հումանիտար խնդիրներին: Այս առնչությամբ Նորին Սրբությունն իր շնորհակալությունը հայտնեց Կաթոլիկ Եկեղեցուն՝ ներդրվող ջանքերի համար:

Իր հերթին արքեպիսկոպոս Ժոզե Ավելինո Բետանկուրը խորին շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ջերմ ընդունելության համար՝ նշելով, որ հետագայում ևս կշարունակի առավելագույն չափով իր նպաստը բերել երկու Եկեղեցիների եղբայրական փոխհարաբերությունների զորացմանը:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաև Արցախի հոգևոր, մշակութային ժառանգության պահպանման և Ադրբեջանում մինչ օրս պահվող հայ գերիների վերադարձման խնդիրներին:

Եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Հոկտեմբերի 8-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում: Սուրբ Տրդատի բաց խորանում մատուցված սուրբ և անմահ պատարագի ընթացքում, ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, եպիսկոպոսության աստիճանի արժանացան Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Տնօրեն ժողովի ատենապետ Տ. Թեոդորոս ծ. վրդ. Զաքարյանը, ԱՄՆ հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ վրդ. Պարսամյանը, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության կալվածոց տեսուչ Տ. Կորյուն ծ. վրդ. Բաղդասարյանը և Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Կիրակոս վրդ. Դավթյանը:

Սրբազան արարողությունների առիթով Սուրբ Էջմիածին էին ժամանել Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներ, ներկայացուցիչներ Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունից, Մայր Աթոռի բարերարներ, ուխտավորներ Հայաստանից, ԱՄՆ հայոց արևելյան թեմից, Իրաքի և Վիրահայոց թեմերից:

Նախորդ օրը՝ առավոտյան, Միածնաէջ Մայր տաճարում՝ Իջման Սուրբ Սեղանի առջև, կատարվեց ուխտադրման արարողությունը: Եպիսկոպոսացու վարդապետները, ծնրադիր վերահաստատելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հավատարմության ուխտը, եկեղեցականների ներկայությամբ ստորագրեցին իրենց երդմնագրերը:

Մինչ սուրբ պատարագը՝ բաց խորանի առջև կատարվեց ընծայման կարգը՝ ընծայացուների հավատքի ուղղափառության քննությունը: Արարողությանը վարդապետների արժանավորության մասին Ամենայն Հայոց Կաթողիկոսի առջև վկայեցին Հայ Եկեղեցու ներկայացուցիչներ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Իրաքից և Վրաստանից՝ դպիրներ, կիսասարկավագներ, սարկավագներ, քահանաներ, եպիսկոպոսներ, ինչպես նաև հավատավոր ժողովուրդը ներկայացնող աշխարհականներ:

Սուրբ պատարագն սկսվեց հայրապետական հանդիսավոր թափորով, որով ամպհովանու ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսն առաջնորդվեց դեպի Սուրբ Տրդատի բաց խորան, որտեղ սկսվեց սրբազան խորհուրդը: Առընթերականերն էին Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել արք. Աջապահյանը և Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանը, խարտավիլակն էր Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ, Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հայրապետական պատվիրակ Տ. Հայկազուն արք. Նաջարյանը:

Պատարագի սրբազան արարողության ընթացքում «Աստվածային և երկնային շնորհ» շարականի երգեցողության ներքո վարդապետները, ծնկի եկած վեր բարձրացնելով իրենց ձեռքերը, հերթական անգամ հրաժարվեցին աշխարհից:

Այնուհետև Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանը հանդիսավոր թափորով Սուրբ Խորան բարձրացրեց սրբալույս մյուռոնը, որով Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, եպիսկոպոսության կոչելով Օշական, Թեոդորոս, Մեսրոպ, Կորյուն և Կիրակոս վարդապետներին, օծեց նրանց ճակատներն ու աջ ձեռքերի բութ մատները:

Արարողության ավարտին նորաօծ եպիսկոպոսներին հանձնվեցին նաև իրենց եպիսկոպոսական իշխանության խորհրդանիշերը՝ եպիսկոպոսական գավազան ու մատանի:

Հիշարժան այս օրվա առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական պատգամն ուղղեց հավատավոր ժողովրդին և նորաօծ եպիսկոպոսներին՝ ի մասնավորի ընդգծելով. «Այսօր վերստին աղոթքը Մեր շուրթերին Ադրբեջանի ռազմական ոճրագործությունների և Արցախի հայաթափման պատճառով լրջագույն մարտահրավերների դիմագրավող մեր հայրենիքի և ժողովրդի համար՝ ամենակալ Տիրոջ բարեխնամ կամոք ու ողորմությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարեցինք եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում:

...Բոլորիս հայցով ու աղոթքով եպիսկոպոսացյալ մեր եկեղեցականները երկնառաք շնորհներ ստացան՝ լինելու հոգևոր տեսուչը հավատացյալների, մեր Սուրբ Եկեղեցու ուղղափառ վարդապետության և սրբազան ավանդության պահպանողն ու փոխանցողը, նախանձախնդիր՝ մեր ժողովրդի աստվածասիրության ու հավատքի զորացման: Իր ծառայության մեջ եպիսկոպոսը կոչված է նմանվելու Քրիստոսին և իր վրա վերցնելու Տիրոջ քաղցր լուծը, իր հավատավոր կյանքով ու գործերով օրինակ լինելու հավատացյալներին: «Նմանվեք ինձ, ինչպես որ ես՝ Քրիստոսին»,— պատվիրում է Սուրբ Պողոս առաքյալը: Տիրոջը նմանվելու կոչումն ու ձգտումը Եկեղեցու սպասավորների համար ակունք են զորության՝ մշտարթուն քաջ հովիվ լինելու, հավատացյալներին Քրիստոսով փրկության առաջնորդելու: Այսպիսի հանձնառությամբ սպասավորության է հորդորում առաքյալը՝ ասելով. «Արածեցրեք Աստծու այդ հոտը, որ ձեզ է հանձնված» (Ա Պետ. Ե. 2)»:

Ամենայն Հայոց Հայրապետը նշեց, որ պատմության ընթացքում այս գիտակցությամբ ներշնչված՝ հայրենիքում և սփյուռքի տարբեր համայնքներում եպիսկոպոսների քաջեռանդ առաջնորդությամբ զորացել է հայոց հոգևոր կյանքը, զարգացել մշակույթն ու դպրությունը, անխաթար պահպանվել ազգային ինքնությունը: Նորին Սրբությունը հաստատեց, որ այսօր էլ Հայոց Եկեղեցու եպիսկոպոսաց դասը, իրեն հանձնված հոտի հանդեպ պատասխանատվությամբ, անհոգնաբեկ ջանքեր է գործադրում, որ հայ ժողովուրդը հավատարիմ մնա մեր հայրերի սուրբ հավատքին և իր կյանքը խարսխի քրիստոնեական արժեքների վրա:

«Ներկայում, երբ Արցախի հայաթափման հետևանքով մեր ազգը գտնվում է լուրջ հիմնախնդիրների հանդիման, մեր Եկեղեցին, մեր սրբազան հայրերը, հոգևոր սպասավորները կանգնած են լուրջ պատասխանատվության առջև՝ նախանձախնդրությամբ իրենց կարևոր նպաստը բերելու Արցախից բռնի տեղահանվածներին մարդասիրական օգնություն ցուցաբերելու աշխատանքներին, մխիթարելու ցավի ու նեղությունների մեջ գտնվող մեր քույրերին ու եղբայրներին»,— ասաց Հայոց Հայրապետը՝ ներկայացնելով եպիսկոպոսության արժանացած եկեղեցականներին և անդրադառնալով նորաօծ սրբազանների տարիների եկեղեցանվեր ու ազգասեր ծառայությանը:

Այնուհետև դիմելով նորաօծ եպիսկոպոսներին՝ Հայոց Հովվապետը մաղթեց, որ ամրանան Սուրբ Հոգու առատաբուխ շնորհներով, երանելի սուրբ հայրերի նմանողությամբ պատրաստ լինեն վերցնելու իրենց խաչը և հետևելու մեր Տիրոջը:

«Մեր հորդորն ու պատգամն է, որ հաստատուն պահեք ձեր ուխտը, ծառայեք և գործեք մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի օրինակով, որպեսզի ձեր սպասավորությամբ Քրիստոսի սերը զորանա հայոց կյանքում, և միասիրտ ու միակամ լինի մեր ժողովուրդը: Մեր նախնյաց պես արթուն պահապանը եղեք հոգևոր և ազգային մեր արժեքների ու սրբությունների, առաջնորդեք մեր ժողովրդին աստվածապատվեր շավիղներով, հայրենիքի լուսավոր ու ապահով գալիքը կերտելու տեսլականով: Հայրենյաց համար այս բարդ շրջանում, երբ մեր ժողովուրդը և պետությունը ծանր փորձությունների միջով են անցնում, շարունակեք ձեր բարի ջանքերը՝ մեր ժողովրդի զավակներին քաջալերելու և գոտեպնդելու, ազգի կարողություններն ու հնարավորությունները նպատակաուղղելու հայրենիքի հիմնախնդիրների հաղթահարմանը, սփոփելու և ըստ ամենայնի սատարելու բռնագաղթյալ արցախցի մեր քույրերին ու եղբայրներին: Այսպիսի հանձնառությունների ու ծառայասիրության մեջ պիտի դրսևորվեն առ Քրիստոս մեր հավատը և հայրենասիրությունը»,— ընդգծեց Նորին Սրբությունը՝ մաղթելով, որ նորաօծ սրբազանների ծառայությունը զարդարվի բարի իրագործումներով՝ ի փառս Աստծու, ի սեր ազգի և մեր Սուրբ Եկեղեցու:

Հայրապետական պատգամից հետո, Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, ներկա եկեղեցականաց դասը, մոտենալով Օշական, Թեոդորոս, Մեսրոպ, Կորյուն և Կիրակոս սրբազաններին, համբուրեց նրանց աջը և ճակատը՝ ստանալով նրանցից առաջին եպիսկոպոսական «Ողջույնը», և շնորհավորեց ձեռնադրության ու օծման առիթով:

Սուրբ պատարագի ավարտին եպիսկոպոսության կանչվելու կապակցությամբ նորընծաներին Խորանի առջև շնորհավորեց նաև հավատավոր ժողովուրդը:

Հաջորդ օրը նորաօծ եպիսկոպոսները մատուցեցին ուխտի իրենց պատարագները. Տ. Օշական եպս. Գյուլգյուլյանը՝ Սուրբ Գայանե վանքում, Տ. Թեոդորոս եպս. Զաքարյանը՝ Մայր Աթոռի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցում, Տ. Մեսրոպ եպս. Պարսամյանը՝ Սուրբ Հռիփսիմե վանքում, Տ. Կորյուն եպս. Բաղդասարյանը՝ Մայր Աթոռի Սուրբ Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Վարդան մատուռ-մկրտարանում, Տ. Կիրակոս եպս. Դավթյանը՝ Սուրբ Շողակաթ վանքում:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Մայր Աթոռը կազմակերպում է արցախցի դպրոցականների ուսումը Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանում

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործող Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը կազմակերպում է ընդունելություն 7—10 տարեկան արցախցի տղաների և աղջիկների համար:

Հայոց մարդասիրական ճեմարանում ուսուցումն անգլերեն է՝ բացառությամբ հայոց լեզու և գրականություն, հայրենագիտություն, Հայոց պատմություն և Հայ Եկեղեցու պատմություն առարկաների:

Հնդկաստանում պաշտոնապես գրանցված և պետականորեն ճանաչված հայկական դպրոցը Դելիի՝ հնդկական տասնամյա դպրոցական կրթության որակավորման խորհրդի անդամ է և աշակերտներին լավագույնս պատրաստում է 10-րդ դասարանի ավարտական քննություններին: Ճեմարանի կրթական ծրագիրն ու չափորոշիչները համապատասխանեցված են Դելիի կրթական համակարգին:

Հայոց մարդասիրական ճեմարանում ուսումն անվճար է: Դպրոցը հոգում է նաև աշակերտների՝ Հնդկաստան ուղևորության, կեցության, սննդի, հագուստի և բժշկական ծախսերը:

Ճեմարան ընդունվելու համար ծնողները պետք է իրենց զավակներից պահանջվող փաստաթղթերն անձամբ ներկայացնեն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոն:

Մարդասիրական ճեմարանի 10-րդ դասարանը «լավ» կամ «գերազանց» գնահատականներով ավարտած հայ պատանիները կարող են իրենց ուսումը ևս 2 տարի շարունակել Կալկաթայի Լա Մարտինիեր անգլիական ավագ դպրոցում:

Վերոհիշյալ դպրոցում աշակերտների ուսման, ճեմարանում կեցության, սննդի, հագուստի և բժշկական ծախսերն ամբողջապես հոգում է Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը:

Լա Մարտինիեր դպրոցի 11-րդ և 12-րդ դասարանները «լավ» կամ «գերազանց» գնահատականներով ավարտած հայ պատանիներին բացառիկ հնարավորություն կընձեռվի իրենց ցանկությամբ, ընտրությամբ և ճեմարանի տեսչության համաձայնությամբ շարունակելու կրթությունը Հնդկաստանի բարձրագույն ուսումնական որևէ հաստատությունում՝ ինչպես բակալավրիատում, այնպես և մագիստրատուրայում: Ուսման ողջ ընթացքում հայ ուսանողներին կտրվի կրթաթոշակ, բացի դրանից՝ ուսման, ճեմարանում կեցության, սննդի, հագուստի և բժշկության ծախսերն ամբողջությամբ կհոգա Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը:

Ընդունելության համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը.

- անձնագիր,
- մկրտության վկայական,
- լուսանկար՝ 4 հատ (5 սմ x 5 սմ), լուսանկարի թվային տարբերակը հարկավոր է ուղարկել mayratorqdk@gmail.com էլ. հասցեին՝ նշելով անունը և ազգանունը:

Հավելյալ տեղեկությունների համար զանգահարել (010) 517 283 հեռախոսահամարով: Դիմումներն անհրաժեշտ է ներկայացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոն երկուշաբթիից ուրբաթ օրերին՝ ժամը՝ 10:00—17:00: Հասցե՝ ք. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Քրիստոնեական դաստիարակության կենտրոն: Էլ. փոստ՝ mayratorqdk@gmail.com, contact@armeniancollege.edu.in:

Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի մասին հավելյալ տեղեկությունների համար կարող եք այցելել https://www.facebook.com/Armenian College And Philanthripic Academy ֆեյսբուքյան էջ:

ԴԱՍԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ: ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սահակ Պարթև կաթողիկոսը

Մեծն Ներսես Պարթևի և Սաթենիկ Մամիկոնյանի որդին՝ Սահակ Պարթևը, եկեղեցական, մշակութային և քաղաքական խոշոր գործիչ է: Նա մոտ 60 տարեկան էր, երբ դարձավ կաթողիկոսական աթոռի գահակալ: Դա 386 թվականին էր, երբ վախճանվեց Ասպուրակես կաթողիկոսը: Կաթողիկոս դառնալուց որոշ ժամանակ անց Վռամ թագավորը Սահակ Պարթևին զրկեց կաթողիկոսական աթոռից ու գրավեց նրա ունեցվածքը, Սահակին Պարսկաստանում բանտարկեց և կաթողիկոս նշանակեց Աղբիանոսի սերնդից ոմն Սուրմակի: Հայ նախարարները Սահակ Պարթևին ձերբակալությունից չորս տարի անց ազատեցին՝ Ապահունյաց տեր Մանեճի և Արշարունյաց տեր Սպանդարատի ջանքերով:

Սահակի վարքագիրն ասում է, որ նորընծա կաթողիկոսի առաջին քայլը եղել է հոգևոր կյանքի նորոգությունը: Ոսկեդարի պատմիչ Մ. Խորենացին նրան համարում է ժողովրդի հոգևորով ապրող կաթողիկոս, որն ամբողջ աշխարհի հոգսը վերցնում էր իր վրա:

Կորյունն իր «Վարք Մաշտոցի» աշխատության մեջ ասում է, որ երանելի Սահակն սկզբում հունարենից հայերեն էր դարձրել եկեղեցական գրքերի ամբողջությունը: Ինչպես վկայված է, Սահակը հունարենից թարգմանում է ոչ միայն Աստվածաշունչը, այլև հույն և ասորի հեղինակների հայրախոսական, իմաստասիրական, պատմագիտական ու բազմաթիվ այլ աշխատություններ: Ղ. Փարպեցին գրում է, թե Մաշտոցը և մյուս թարգմանիչները դիմում էին Սահակ Պարթևի օգնությանը, քանի որ նա լավ գիտեր հունարեն և տեղյակ էր հունական արվեստին: Հասկանալի է, որ նրանք չէին կարող անսխալ կատարել գործը՝ առանց առաջնորդվելու սուրբ հայրապետ Սահակի կողմից, որը վարժված էր, բարձր էր հունաց շատ գիտնականներից՝ լինելով կատարելապես հմուտ հունարեն տառերի հնչյունաբանությանը և հռետորական մեկնաբանություններին, առավել ևս նա ցույց էր տալիս իր տեղյակությունը փիլիսոփայական արվեստի վերաբերյալ:

Ս. Սահակ Պարթևի մեծ ջանքերով Հայ Եկեղեցին, մշակույթն ու դպրոցը ստանում են ազգային նկարագիր: Ազգային Եկեղեցու հովանու ներքո ծաղկում են ազգային մատենագրությունն ու թարգմանական արվեստը: Կան տվյալներ, որոնք վկայում են, որ Ս. Սահակը հունարենից թարգմանել է ծիսական մատյանները՝ Ժամագիրքը, Պատարագամատույցը, Մաշտոցը, Տոնացույցը, նաև Եկեղեցու

հայրերի որոշ աշխատություններ: Սահակ Պարթևը մեծ դեր է ունեցել նաև Աստվածաշնչի թարգմանության մեջ. դա տեսնում ենք Աստվածաշնչի ձեռագիր օրինակներից մեկում. «Տեառն Սահակա կաթողիկոսի զՄնացորդս յետոյ ամենայն մարգարէից է թարգմանեալ»:

Կանոններում խոսվում է Եկեղեցու պաշտոնյաների պարտականության և իրավունքի մասին, դասակարգվում են նրանց և ժողովրդի հարաբերության ձևերն ու եղանակները: Օրինակ՝ ԻԶ կանոնում արգելվում է ամուսնացնել մանկահասակներին, նաև արգելվում է, առանց ամուսնացողների կարծիքը հաշվի առնելու, կատարել պսակի արարողություն: Պետք է նշել, որ Ս. Պարթևը ԺԲ կանոնի մեջ խոսում է քահանաների ծուլության, կանոնը չպահելու մասին:

Սահակ Պարթև հայրապետն իր մասնակցությունը բերել է նաև ծիսական մատենագրության բնագավառում: «Օրհնութիւնաբեր» անունը կրող ցուցակը նրան է ընծայում ժամակարգության մեջ գտնվող մի քանի կարգեր: Դրա մասին կա վկայություն. վկայում են Հովհան Օձնեցին և Հայսմավուրքը: Շարականների հեղինակների մատենագիտական ցանկերում նշվում է, որ Ս. Պարթևը հորինել է Ավագ շաբաթվա շարականները: Դրանք գրված են պարզ ու հստակ: Ասվում է, որ հատկապես աչքի են ընկել Ավագ շաբաթվա այս չորս երգերը՝ «Այսօր կանգնեցաւ», «Արծաթսիրութեամբ», «Ի գիշերին», «Ով սքանչելի»: Սրանք երգվում են Ավագ հինգշաբթի՝ լույս Ավագ ուրբաթ գիշերային ժամին, այսինքն՝ Ոտնլվայի արարողությունից մինչև Հիսուս Քրիստոսի Թաղում:

Սահակ Պարթևը տարբեր թղթեր է հղել աշխարհիկ ու հոգևոր իշխաններին: Հինգերորդ դարի պատմիչ Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատության մեջ ամփոփված են Ս. Պարթևի ուղարկած թղթերի պատճենները՝ հղած Ատտիկոս հայրապետին, Թեոդոս Կայսերը և Անատոլիոս զորավարին:

Մյուս պատմիչը՝ Ղազար Փարպեցին, իր «Պատմութիւն Հայոց» աշխատության մեջ զետեղել է Վաղարշապատի եկեղեցում Սահակ Պարթևին հայտնված տեսիլքի նկարագրությունը՝ հայրապետի կողմից արված: Նշանավոր մատենագիրներ Հովհան Մայրագոմեցին, Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, բյուզանդական պատմագիր Կոստանդին Ծիրանածինը այս տեսիլքը վավերական են համարում և Սահակի անվամբ են հիշատակում: Կարևոր է իմանալ նաև, որ Կոստանդին Ծիրանածինը տեսիլքում առկա գուշակությունները կապում է իր պապի՝ Վասիլ Ա կայսեր ժամանակների հետ: 12-րդ դարի մատենագիր Ներսես Լաբրոնացին տեսիլքի վավերականությունը կասկածի տակ է առնում: Նա ասում է, որ տեսիլքը չի հիշատակվում Խորենացու Պատմության մեջ:

Սահակ Պարթև հայրապետի ժամանակ էր, երբ նեստորականները Հայաստան են բերում Նեստորի համախոհ երկու վարդապետների գրքերը, որպեսզի այստեղ տարածեն նրա վարդապետությունը: Նեստորականությունը քրիստոնեական ուսմունք է, որը դատապարտվել է որպես հերետիկոսություն Եփեսոսի ժողովում: Բայց Սահակն ու Մաշտոցը մերժեցին այն և նզովեցին Նեստորի ուսմունքը, այնուհետև երկրից հալածեցին նեստորականներին:

Հայոց առաջին տոնացույցում տոնական տարին սկսվել է հունվարի 6-ով: Կա մի տեսակետ, որի համաձայն՝ հունվարի 6-ը հաստատել է Սահակ կաթողիկոսը, սակայն հավանականությունը մեծ է, որ Ծնունդը հունվարի 6-ին տոնում էին դեռևս վաղ ժամանակներում: Տոնի խորհուրդը կազմող շարականների, աղոթքների դասավորման առումով մեծ դեր են ունեցել Սահակ Պարթևը, Մեսրոպ Մաշտոցը, Հովհաննես Ա Մանդակունի կաթողիկոսը, 8–12-րդ դդ. գործիչները: Ըստ ավանդության՝ տոնի կարգավորության հիմնադիրը համարվում է Գրիգոր Լուսավորիչը, ապա՝ Սահակ Պարթևը:

Ծննդյան Մեծ պահքի մասին մինչև այսօր հայտնի առաջին վկայությունը թվագրվում է 6-րդ դ.՝ արդեն Սահակ Պարթևի անունով, սակայն Ներսես կաթողիկոսին և Ներշապուհ եպիսկոպոսին պատկանող «Թէ որպէս սահմանեցաւ կարգ եւ ուխտի եւ որոշման վանաց» կանոնախմբի Խ կանոնում՝ «Տաւն սրբոյ Յայտնութեանն, եւ քառասնորդք նորա»:

Ինչպես վերևում ասացինք, Սահակ Պարթևը մեծ ներդրում է ունեցել շարականագրության մեջ: Մինչ անդրադառնալը Ս. Պարթևի շարականներին՝ նախ ասենք, որ *շարական* բառը հայ գիտնականները բացատրում են տարբեր ձևերով: Այն բաղկացած է *շար՝ շղթա* բառից և *ակ՝ մարգարիտ* բառից, որից դարձել է *շարական*, այսինքն՝ մարգարիտների շար:

Հինգերորդ դարի հոգևոր երգը ներկայացնում է այդ դարում հավատացյալ մարդու ներաշխարհը: Այդ ժամանակաշրջանում մեղքի և մահվան գաղափարները տանջում են մարդուն, և հոգևոր երգի միջոցով նա իր վախերը, անհանգստությունները հեռացնում է իրենից: Այս ամենից ելնելով՝ կարող ենք ասել, որ շարականները խաղաղություն են պարգևում: Այս շարականներով հոգևոր հայրերը նպաստել են նաև ավետարանական գիտելիքների յուրացմանը:

Սահակ Պարթևի շարականներում տեսնում ենք ավետարանական դրվագների բանաստեղծական վերափոխումներ: Հիսուս գալիս է Երուսաղեմ, ձիթենու ոստեր բռնած և օրհնելով՝ Նրան ընդառաջ են գնում ծերերն ու մանուկները.

Յորժամ եկն Յիսուս
յԵրուսաղէմ քաղաքն,
Ընդ առաջ ելին ծերքն՝
Ոստովք ձիթենեօք
եւ զԱստուածորդին փառաւորէին:

Սահակ Պարթևի շարականներում ներկայացված են նաև Հիսուսի դատավարությունը և մահը՝ ըստ Ավետարանի: Նրա գրչին են պատկանում գիշերային ժամերգության չորս երգեցիկ քարոզներն ու աղոթքները ևս, ինչպես նաև ութ ձայնեղանակներն ու երկու ստեղները, Ղազարին նվիրված շարականային կարգերը, Ծաղկազարդի կանոնները, երկրորդ Ծաղկազարդի հին կանոնի երգերը:

Սահակի շարականները կրոնական պարզ երգեր են: Ծաղկազարդի տոնին նվիրված շարականներում Քրիստոս, ավանակին նստած, մտնում է Երուսաղեմ.

Թագաւոր գոլով քո յաշխարհի
Մտեր ի քաղաքն Երուսաղեմ,
Նստեալ ի վերայ հողեղէն նոր
յաւանակի,
Կոչել զհեթանոս յերկրպագութիւն:

Ավետարանական պատումին շատ հաճախ միահյուսվում են հեղինակի ներքին ապրումները, հույզերը, զգացումները, և այդ ամբողջն արտահայտվում է շարականագրի պարզ, հասկանալի և մաքուր լեզվով: Կյուրեղ վարդապետ Քիպարյանն իր «Պատմութիւն հայ հին գրականութեան» աշխատության մեջ գրում է, որ Սահակ Պարթևը մատենագիրներից ավելի մեծ եղավ իբրև կաթողիկոս ու կազմակերպիչ: Նա ուներ բարձր և լուսավոր միտք, օժտված էր կամքի կորովով, խոհական իմաստությամբ, բայց գերադասելի հոգի ուներ, որը լցված էր անսահման բարությամբ, կրոնական խոր զգացումներով: Նա էր, որ ստեղծեց հայ կյանքի համար իմացական և կրոնական անասելի շրջան, որի շնորհիվ փոխվեց մեր պատմությունը:

Հետաքրքիր է իմանալ, թե ինչ ձևով մահացավ երանելի հայրապետ Սահակ Պարթևը: Պարսից հալածանքներից խուսափելու նպատակով Սահակին բերեցին Բլուր գյուղ, ուր նա մահացավ 439 թ.՝ իր ծննդյան օրը: Նրա դին աշակերտների և հարսի՝ Վարդան Մամիկոնյանի կին Դստրիկի հետ փոխադրեցին Տարոն գավառի Աշտիշատ գյուղ և հողին հանձնեցին:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանն ասում է, որ Սահակի համար մեծ ցավ եղավ այն, որ նրանից հետո իր ազգատոհմի մեջ արու ժառանգ չեղավ: Ինչպես նշվում է հայ հին և միջնադարյան գրականության մեջ, նրա՝ Սահակի մահից հետո մնացել էին Սահականույշ աղջկա որդիները՝ Վարդանը, Հմայակը և Համազասպյանը: Գրիգոր Լուսավորչի տոհմի շարունակությունն արական ճյուղով դադարեց, իսկ իգական ճյուղով խառնվեց Մամիկոնյաններին:

Այսպիսով՝ Սահակ Պարթևը հայրապետական աթոռին մնաց 52 տարի: Նա սիրվեց ժողովրդի կողմից մինչև իր կյանքի վերջը, թողեց անմահ հիշատակ, դասվեց Հայ Եկեղեցու սրբերի շարքում: Սահակ Պարթևին առանձին հիշատակում են Վարդանանց տոնին նախորդող շաբաթ օրը և Առաջավորաց պահքից հետո:

Աշխատասիրությամբ՝
ՕՖԵԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

ՆԱԽԷ... ԱՆՄԿԻԶԲ ՈՒ ԱՆՎԵՐՋ, ԱՆՔՆԻՆ ԵՎ ԱՆԸՍՏԳՅՈՒՏ....

Աստվածաշունչը և հնագիտությունը

Ժամանակակից աստվածաշնչագիտությունը, որը մեր միջնադարյան ձեռագրերում հանդիպում է «Սուրբ Գրոց ուսում» անվամբ, խարսխվում է երեք գիտակարգի (ճեմարաններում՝ ուսումնական առարկաների) վրա, որոնք տարբեր կողմերից են լուսաբանում Աստվածաշունչ Մատյանը՝ ի հայտ բերելով նրա աստվածային ծագումը՝ աստվածաշնչականությունն ապացույցներով, հավաստի նշաններով հանդերձ, հավիտենական նշանակությունը, հոգին, միտքը և սիրտը կրթող զորությունը, հավաստում նրա աներկբա պատմականությունը, բնագրերի արժանահավատությունը և հարազատությունը, մեկնում յուրաքանչյուր տող, բառ ու բան:

Սուրբ Գրքի մեկնության և ներածության կողքին Աստվածաշնչի իսկությունն ու անսխալականությունը լուսաբանելու իրավունքն է լիիրավորեն վաստակել սուրբգրային (Բիբլիական) հնագիտությունը, և ահա երկու դար է, ինչ բարձրագոչ հայտատարում է, որ չկա մի հնագիտական փաստ, որ գեթ դույզն-ինչ հակասի Աստծու այս հույժ օրհնյալ Գրքին:

Գիրք գրոցի կարևոր առանձնահատկություններից են նրա հնությունն ու կազմության երկարատևությունը՝ գրված (ըստ Տ. Տեր-Միքելյանի «Ուսումն Սուրբ Գրոց» գրքի ժամանակագրության) Ք. ա. 1500 թվից մինչև Ք. հ. առաջին դարը՝ հայտնություն առ հայտնություն Սուրբ Հոգու թելադրանքով և Նրա իսկ կողմից ընտրված շուրջ 40 մատենագիր մարգարեների, ավետարանիչների ու առաքյալների ձեռամբ:

«Հրեական գրքերի խոր հնությունը,– հույներին և հռոմեացիներին հղած իր խոսքում նկատում է առաջին լատինագիր քրիստոնյա աստվածաբան Տերտուղիանոսը (2-րդ դ. վերջ),– այնպիսի հեղինակություն է հաղորդում նրանց, ինչպիսին ուրիշ գրքեր ունենալ չեն կարող: Նրանք շատ դարերով նախորդում են ձեր չաստվածներին, քրմերին, տաճարներին: Եթե դուք լսել եք Մովսեսի մասին, ապա, գիտեք, որ նա ութ հարյուր տարով նախորդում է Հռոմի հիմնադրմանը: Իսկ հետևելով բազում տարեգրությունների՝ կարող եմ ասել, որ հինգ հարյուր տարով նախորդում է Հոմերոսին: Մովսեսին հաջորդած բոլոր մարգարեներից նույնիսկ ամենավերջինը նախորդում է ձեր իմաստուններին, օրենսդիրներին և պատմիչներին»:

➥ էջ 8

ՆԱԽԷ... ԱՆՄԿԻԶԲ ՈՒ ԱՆՎԵՐՋ, ԱՆՔՆԻՆ ԵՎ ԱՆԸՍՏԳՅՈՒՏ....

Մահից վախենալը
(քարոզ)

«Ամեն ինչ կատարված է» (Հովհ. ԺԹ 30). Ծանր ժամեր անցկացնելուց հետո ասաց Փրկիչն այնպիսի բարձր ձայնով, որ հեռուները գնաց: Այս այն պահն էր, երբ չարչարանքներից ու ստացած վերքերից ուժասպառ զգում էր, որ մահը մոտենում է, այս այն պահն էր, երբ փառավոր կերպով հրեշտակը եկավ և Նրա տառապանքներին վերջ տվեց:

Ինչը պետք է ինձ վախեցնի, երբ ցավերս փշե պսակ են դարձել՝ գլխիս դրված: Ես պետք է իմ Փրկչին նայեմ, որ գերության բոլոր շղթաները փշրում է: Նրա հաղթության խոսքը՝ «ամեն ինչ կատարված է», իմ մութ գերեզմանի մեջ ևս կգա կհասնի ինձ:

Եթե մենք՝ մահկանացուներս, կարողանայինք դեռևս օրորոցում տեսնել և իմանալ մեր կյանքի ընթացքը՝ մեր գլխին գալիքներն ու ցավերը, այդ ժամանակ շատերս, կյանքն աչքի առաջ ունենալով, առավել պետք է վախենայինք և սարսափեինք ապրելուց, քան մեր կյանքի վերջից, որ մահ կամ մեռնել ենք ասում:

Շատ անգամ մարդու կյանքը նմանեցրել են ուխտագնացության: Կյանքն այնպիսի մի ճանապարհորդություն է, որ ո՛չ մեր կամքով է սկսվել և ո՛չ էլ մեր կամքով պիտի ավարտվի: Սաստիկ շտապելով՝ անդադար առաջ ենք ընկնում. սկսում ենք մեր ճանապարհը առավոտյան շատ վաղ՝ դեռևս լույսն ու մութը չբաժանված, և դեռևս մթին՝ այդ գիշերը չլուսացրած՝ դուրս ենք գալիս ու դեպի մյուս գիշերը գնում: Մեր չորս կողմում ամեն բան մեր աչքերից ծածկված է. ոչինչ չենք տեսնում:

Ոտքերը թռչում են, ժամերը՝ վազում, հեռանում մեզնից: Ուրախությամբ մի պահ մտովի կմնայինք մեր երեխա ժամանակվա ծաղիկների մոտ, որոնք քաղցրությամբ ժպտում են մեզ: Բայց ավաղ: Մի անտեսանելի զորություն բռնի ուժով քաշում է մեզ մեր կամքին հակառակ, պոկում այդտեղից ու հեռացնում. կեսօրվա արեգակն իր տաքությամբ այրում է մեր գլուխները, և այդ պահին չէինք մտածում, որ այդպես շուտ մեր կյանքի օրը կես օր կդառնա: Մենք տեսնում ենք ստվերոտ և հով տեղեր, որ մեզ հրավիրում են նստելու, հովանալու և հանգստանալու: Ուրախությամբ մի քիչ կմնայինք վայելելու այդ վայրերը: Բայց անկարելի է, պետք է գնալ, որպեսզի առաջ ընթանանք, զուր ենք ամուր կառչում մեզ ուրախություն պատճառող այն ամենին, որ մեր ճանապարհին հանդիպում են մեզ: Մեկ էլ տեսնում ես՝ երեկոն մոտեցավ, և արևը մայր մտավ, ու նոր գիշերը կամաց-կամաց մոտենում է: Շատ կցանկանայինք օրվա ճանապարհորդությունն ավարտել ու հանգստանալ, բայց անծանոթ մի ձայն ասում է. «Գնա՛, գնա՛ առաջ»: Խավարը պատում է մեզ ու մեր ճանապարհը, այլևս ոչինչ չենք տեսնում, ամեն լույս հանգչում է, ամեն բան անհայտանում, մեր զգացմունքները դադարում են. ճանապարհորդությունն ավարտվեց, եկանք, տեղ հասանք:

Այս է մեր վիճակը, բոլորս էլ գիտենք: Դու այլևս չես վախենում ու չես դողում այն գիշերից, որից լույս աշխարհ եկար, ծնվեցիր, ապրեցիր. ինչո՞ւ ես սարսափում այն գիշերից, որ պետք է վրադ գա:

Ի՞նչ է մեռնելը. ճրագի պես հանգչել, ինքն իրեն մոռանալ՝ վերանալ: Մենք չգիտենք մյուս աշխարհը, բայց հողեղեն մարդը չի էլ կարող հասկանալ, եթե անգամ հայտնվի այնտեղ: Ինչո՞ւ մարդը չունի այն զգայարանները, որոնք անհրաժեշտ են այն աշխարհն զգալու համար, և այս աշխարհում ունեցած փորձառությունից վեր է: Կույր ծնվածին ինչպես պետք է զգացնես այն հրճվանքը, որ ապրում ես՝ մշտագարուն երկիր տեսնելով, որն իր գեղեցկությամբ հիացնում, կախարդում է քեզ: Եթե այնպես լիներ, որ մի կենդանի մարդկային կերպարանք և բանականություն ստանար, այդ նոր մարդն արդյո՞ք կցանկանար իր առաջվա՝ կենդանական վիճակին վերադառնալ: Հետևաբար ինչո՞ւ ենք վախենում մահից, մեռնելուց: Ինչո՞ւ է մեր կյանքը, որ այժմ ունենք, ավելի գեղեցիկ երևում մեզ, քան մյուս կյանքը: Սակայն եթե իմանայինք, որ ինչքան ապրել ենք, այդքան ևս պետք է ապրենք, շատ քչերը կգտնվեն, որ կցանկանան այնքան ապրել, որքան ապրել են և տեսնել բոլոր այն սև օրերը, քաշած-չքաշվելիք ցավերը, իրենց արած մեծ սխալներն ու անխելքությունները և այն անտանելի հոգսերը, որ սրտները օր ու գիշեր մաշում էր՝ զրկելով թե՛ սրտի հանգստությունից և թե՛ կյանքի ամեն քաղցրությունից:

Մահից վախենալու գլխավոր երկու պատճառ կա, որ պետք է ինքներս մեզ բացատրենք, հաշիվ տանք ու հասկանանք:

ա. Աստված մեր մարդկային բնության (էության) մեջ խորն արմատավորել է ապրելու ցանկությունն ու ձգտումը, և երկար ապրել ենք ուզում: Դրա համար վրդովվում, ընդդիմանում է մարդու բնությունն այն բանի դեմ, որ մահ է կոչվում: Եթե կյանքի, ապրելու հանդեպ սերը չլիներ, այժմ երկիրն անմարդաբնակ անապատ դարձած կլիներ: Անթիվ, անհամար վտանգներ կան մարդու առաջ, որոնց հետ պետք է կռիվ տա: Հազար անգամ կուլ կգնար այդ բոլոր վտանգներին, սակայն կյանքի հանդեպ սերը և ապրելու ցանկությունը ուժ են տվել նրան ամենադժվարին բանն անգամ անելու: Եղել են մարդիկ, որ իրենց սեփական խելքի պատճառով, իրենց գլուխներին բազում տառապանքներ են բերել: Նրանք վաղուց մեռած կլինեին առանց հասակ առնելու, բայց երբ մտաբերել են մութ գերեզմանի մեջ մտնելու միտքը, սարսափել են իրենց մտքով անցածից, հետ են կանգնել՝ հաշտվելով իրենց բաժին հասած դառը օրերի հետ: Շատ անգամներ հուսահատությունը, պղտորելով, խառնելով նրանց միտքը, ուղղել է նրանց քայլերը դեպի կորստյան անդունդը: Ու թեև այդ ժամանակ իրենց մտքերում հոժարակամ համաձայնել են փախչել, ազատվել այս աշխարհից, բայց հենց այդ ժամանակ կյանքն ավելի քաղցր է երևացել նրանց աչքերում, և իրենք իրենց նորանոր հույսեր են տվել: Հույսը մեր կյանքի անբաժան ընկերն է, քանի որ մարդը միշտ հույսով է ապրում: Եվ հենց այդ նույն հույսը մարդու ձեռքից վերցնում է այն թուրը, որը բարձրացել էր նրա վրա հուսահատությունից: Աստծո վճիռն այս է, պետք է ապրենք:

Եթե մեր մեջ ապրելու սաստիկ ցանկությունը չլիներ, մահվանից հետո եկող կյանքը բարիք կլիներ: Բայց մեր մեջ ապրելու սեր կա, միևնույն ժամանակ այն ցանկությունը կա, որ մահվանից հետո ևս մեր կյանքը շարունակվի, և հավիտենական կյանք ունենալու հույսի հետ կապվում է մահից հետո ապրելու կարևորության զգացումը:

Բայց հենց այստեղ է սխալվում մարդը. կյանքի, ապրելու հանդեպ սերն անբնական կերպով իրեն տանջող կիրք է դարձրել: Մարդն իր մահվանից առաջ իրեն տանջում է անօգուտ և զուր երևակայություններով և իր երկրավոր կյանքին չափից առավել մեծ արժեք է տալիս:

Շատ անգամներ հիվանդ և դյուրագրգիռ հոգեվիճակը մահը մեզ ներկայացնում է իբրև ուրվականի նման այլանդակ մի բան, որպեսզի մեզ զարհուրեցնի: Այն երբեմն էլ երկարատև և տանջող տխրություն է բերում, որն ավելանալով անդադար չարչարում է մեզ՝ անհիմն, անտեղի վախ գցելով մեր սրտերում: Ոչ թե մահվանից հետո փոփոխությունն է մեզ սարսափեցնում, այլ մեզ պաշարող մտքերն են մեզ վախեցնում: Ահ ու սարասափ բերող այդ մտքերն են, որ կարծես թե մեր միտքը շուռ են տալիս՝ խլելով մեզնից մեր մտքի ու սրտի հանգստությունը: Այս ամենի հնարողը մարդն է, որ ինքն իրեն տանջելու համար այդպիսի բաներ է հնարում:

Մեռնողն իր մահանալը այնպես քիչ է հասկանում, ինչպես սաստիկ հոգնած մարդը քուն է մտնում: Մենք շատերին ենք տեսել, որ մահվան մահճում՝ գիտակցությունը տեղը, իրենց մահվան րոպեին էին սպասում: Նրանք այնպես վախճանվեցին, կարծես թե քնեցին՝ առանց վախի: Այսպես պիտի վախճանվի ամեն քրիստոնյա, ով Աստծուն է հավատում և իր սրտում անխաբ հույս ունի իր Ստեղծողի նկատմամբ, Որին ապավինել է: Վախճանվածը չի տեսնում այն ամենը, ինչը որ տեսնում են մահացածի անկողնու չորս կողմում կանգնած մերձավորները կամ ծանոթները:

Մենք, անշունչ դիակին նայելով, սարսափում ու դողում ենք: Եվ տեսնելով պառկած, առանց վեր կենալու կարողության, սառած, փայտացած, անշունչ ու դեղնած՝ կարծում ենք, թե նա մեզ հետ չի ապրել, մեզանից մեկը չի եղել և մեզ երբեք չի ճանաչել: Այդ մեծ ահն ու սարսափը գալիս է մեզ վրա, քանի որ մենք ինքներս մեզ խաբում ենք: Երբ ինքներս մեզ լավ քննում ենք, հասկանում ենք, որ մահացածի վրա լաց ենք լինում, ցավում այն բանի համար, ինչ որ նա այժմ կորցրել է: Բայց նա այդ ամենը չգիտի: Մենք հիշում ենք, թե ինչպես սրտանց սիրում էր մեզ, կցանկանար ավելի երկար ժամանակ մեզ մոտ մնալ, մեզ հետ ապրել: Բայց անհայտ մի ձեռք նրան մեզնից խլեց ու բաժանեց: Զուր կլինի մեր ցանկությունը, որ նրան մեզ մոտ պահենք: Նա անհայտացավ իր կյանքի թագավորությունից ու թողեց իր պատյանը՝ սառն արձան դարձած մարդու կերպարանքով, որին մի ժամանակ սիրում էինք, քանի որ մեջը հոգի կար: Բայց այդ մարմինը հոգու մասը չէր, այլ տարերքինն էր ու կրկին պիտի գնա միանալու տարերքին, որտեղից որ ստեղծվել էր:

Մահվան մասին գիտելիքներդ դարձրու պարզ ճշմարտություն, և մահվան արհավիրքները քո աչքերին ոչինչ կերևան:

Շատ անգամներ մեծ նշանակություն ենք տալիս մեր երկրավոր կյանքի բարիքներին ու վայելքներին: Մեր կյանքը միայն մի գին ունի, և այդ գինը երևում է այն ժամանակ, երբ ապրում ենք՝ մեր սիրտը կատարելագործելով, մեր բանական հոգին ազնիվ ու առաքինական մտքերի մեծ պաշարով զարդարելով և մեզ նման մարդկանց օգնելով: Եվ երբ այդ ամենը չենք կարողանում անել և անգամ հույս էլ չենք ունենում դրանք անելու (ինչը պատահում է մարդու ծերության տարիներին), այդ ժամանակ կյանքը կորցնում է իր արժեքը, և մի նոր կյանքի են փափագում:

Մեծ հոգու տեր մարդիկ կյանքից ավելի բարձր բարիքներն էին ճանաչում: Ո՛վ կատարյալներ, դուք այն ազնիվ և քաջ հոգու տեր հերոսներն էիք, որ առանց երկյուղի՝ մահվանն ընդառաջ գնացիք՝ ձեր կյանքը զոհաբերելով հայրենիքի ու ազգի ազատության ու բարօրության համար: Եվ դուք, ո՛վ առաքինիներ, այն վսեմ և անձնվեր մարդիկ էիք, որ Հիսուս Քրիստոսի հավատի ճշմարտության համար անվեհեր սրտով հանուն Աստծո սիրո զոհաբերվեցիք և դեպի ձեր գերեզմանը շտապեցիք: Դուք մահն անարժան կյանքից ավելի լավը համարեցիք և կյանքի գինը լավ իմացաք: Դուք ամենամաքուր առաքինության փափուկ գրկում անմահ և անվախ մեռաք՝ երկնային մի գործի մեջ ձեզ վարժեցնելով: Ձեր մահն ավելի նախանձելի էր, քան հազար ուրիշ մարդկանց կյանքը: Ձեր քաղցր, պատվելի ու անմոռանալի հիշատակը կմնա հավիտյան:

Բայց ով ապրում է այս աշխարհում որդի նման՝ հանուն միայն սողալու, ուտելու և խմելու, առանց մտածելու, որ իր սիրտն ու հոգին վաղորոք պիտի պատրաստի ավելի ազնիվ կյանքի համար, և ով ապրում է միայն, որպեսզի իր սնափառությունն ու հպարտությունն ավելացնի և մարդկանց աչքին մեծ երևա և դրանով կարծի, թե մեծ փառքի է հասել, և ով ապրում է միայն, որ խարդախություն, չարություն, անտեղի թշնամություն և զրկանք պատճառի, որ իր չունեցած ուժն ու ոչինչ լինելը ցույց տա, թերևս իր նմանների առաջ հնարագետ և գուցե խելոք մարդ համարվի, և ով այն բանի համար է ապրում, որ իր փողը շատացնի՝ քաղցած ու ծարավ, չտես մեծացած լինելով, խիղճ, ամոթ, պատիվ, հոգի, հավատ մի կողմ դրած, թեև աջ ու ձախ ուտում է, բայց չի կշտանում, այդպիսի մարդը կարծես կուրացել, ուրացել է Աստծուն ու առաքինությունը: Նրա համար, փողից բացի, ցանկալի ոչինչ չկա: Եվ ով ապրում է միայն, որ պատիվների, աստիճանների հասնի՝ ուղիղ թե զարտուղի ճանապարհներով, արժանաբար թե անարժանաբար, և ով ապրում է միայն, որ իր կրքերին հագուրդ տա, զվարճանքների և վայելքների մեջ իր կյանքն ապրի, բայց այս ամենը ոչ միայն մնայուն չեն, այլև մեզ գերեզման ուղարկելու պատճառ կլինեն՝ դեռևս մահվանից առաջ բարոյապես մեզ սպանելով:

Այսպիսի մարդիկ իրենց կյանքով ո՛չ իրենց օգուտ բերեցին և ո՛չ էլ ուրշներին օգտակար եղան: Եվ երբ այսպիսի մարդիկ մեռնում են, նրանց խղճում ենք՝ իբրև անբախտ, թշվառ, ողորմելի, անարժան արարածների, որ մարդկությունից դուրս էին:

Շատ անգամ մահվանից վախենալու և ապրելու ցանկության պատճառը մտահոգությունն է նրանց հանդեպ, որ պետք է շարունակեն մեզնից հետո ապրել: Դողը պատում է մեզ, երբ մտաբերում ենք մահը, քանի որ մեզ պետք է խլի մեր ամուսնու գրկից: Մենք վախենում ենք մահվանից, քանի որ մեր գերեզման մտնելուց հետո պիտի գան, շրջապատեն մեզ մեր սիրելի զավակները՝ որբացած, անտեր-անտիրական, անօգնական, անպաշտպան՝ առանց կրթության, առանց ուսման:

Սա է պառճառը, որ հասակ չառած մարդիկ, որոնք որևէ մեկին խնամելու և հոգ տանելու խնդիր չունեն, ավելի անհոգ են մեռնում, քան թե հայրերն ու մայրերը, որոնց սիրտն իրենց զավակների հետ է, որոնցից բաժանվել չեն ուզում՝ առանց մեծացնելու, ինչպես որ իրենք են ցանկանում: Բայց քրիստոնյան չպետք է հուսահատվի: Հայրեր և մայրեր, դո՞ւք էիք մինչև հիմա պահպանում ձեր զավակներին: Աստված է պահպանողը, Աստված է որբերի Հայրը, և Նա է ամենավերջին և ամենափոքր արարածի կյանքի համար հոգ տանողը: Եթե Աստված ցանկանում է, որ նրանց համար լավ լինի, լավ մարդիկ լինեն, ոչ մեկը չի կարող խոչընդոտել: Նրա նախախնամությունն է, այլ ոչ թե մարդկանց կամայականությունը, որ նրանց առաջնորդում է իրենց կյանքում և կառավարում: Եթե մի օր Աստված քեզ կանչի այս աշխարհից, իսկույն վեր կաց, գնա քո երկնավոր Հոր մոտ, և կգա ժամանակը, ու քո երեխաներին ևս քեզ մոտ կբերի:

բ. Մահից վախենալու երկրորդ գլխավոր պատճառն այն է, որ մարդիկ կան, որոնք իրենց սիրտն օտարացրել են հավատքի հավիտենական ճշմարտությունից: Թեև Քրիստոսի անունով ես մկրտվել և Նրան ես դավանում և մասնակցում ես աստվածպաշտական արարողություններին, բայց տեսնենք՝ արդյո՞ք հոգով և ճշմարտությամբ ես Քրիստոսի պատվիրանները պահում: Արդյո՞ք Աստծո հետ անկեղծ սրտով և սերտ կապով ես միացած: ➥ էջ 7

Մահից վախենալը

➥ էջ 6

Արդյո՞ք ամեն տեղ ու ամեն ժամանակ արդարությունը ձեռքիցդ բաց չես թողնում և մտքիցդ ու սրտիցդ չես հանում: Արդյո՞ք այնքան բարի գործեր ես արել, որքան հնարավորություն ունեիր: Արդյո՞ք թշնամիներիդ հետ հաշտվել ես կամ նրանց ներել և քեզ արած վատությունները լավությամբ փոխհատուցել: Արդյո՞ք հիշում ես ծածուկ գործած՝ ամոթ և նախատինք բերող արարքդ. խիղճդ քեզ չի՞ տանջում և դատապարտում:

Բարեպաշտ մարդն Աստծո զավակն է՝ հայացքը հավիտենական կյանքին ուղղած, ձեռքը՝ լավություն անելու համար բաց, հանգիստ և հանդարտ գնում է իր ճանապարհը մրրիկների և փոթորկների միջով՝ երջանիկ համարելով իրեն այն ուրախությունների համար, որ Աստված իրեն պարգևել է: Ազնիվ քրիստոնյայի մահվան անկողինը շատ անգամ ամենամեծ օրհնության վայր է դառնում թե՛ իր ժամանակ ապրողների և թե՛ իրենից հետո աշխարհում բնակվող մարդկանց համար:

Բայց միայն զգայական կյանքով ապրող մարդը, երբ մտաբերում է, թե մահ կա, մեռնել կա, սարսափելի կերպով զգում է, որ իր հոգու մեջ չկա մի բան, որ իրեն հույս տա կամ ուրախացնի: Դատարկ է իր հոգին՝ միայնակ օտարականի նման: Դա ի՞նչ հոգի է, որ պիտի իրեն զրկի այն ամեն ինչից, ինչն իրեն մինչև հիմա կարող էր ուրախացնել: Նա երբեք չէր մտածել, որ ավելի բարձր կոչում ունի: Ուրեմն ի՞նչ պետք է լինի նրա հետ: Պիտի կորցնի՞ մինչև հիմա իր ճանաչած ու արժևորած ուրախությունները: Ինքը կգնա և գերեզման կմտնի, և իրենից հետո պետք է մնան բոլոր ուրախություններն ու վայելքները և այն ամենը, ինչ որ իր սրտին հաճելի էր. այլևս չպետք է վայելի պատվավոր ճաշերն ու խնջույքները, այլևս չպետք է ունենա իր պատվավոր տեղերն ու աստիճանները, իր թանկագին հագուստները, իր հավաքած մեծ դրամները՝ իրենց բերած շահերով, որ վայելքներ սիրող և ցանկասեր ու անկուշտ ժառանգները պիտի մսխեն՝ անիմաստ վատնելով: Իր դռան առաջ կանգնած ողորմություն խնդրող աղքատից ավելի աղքատացած, վիզը ծռած՝ ձեռնունայն կանգած է հավիտենական աշխարհի դռան առաջ, իր ունեցած ամեն բան կորցրել է, ոտքից գլուխ ողորմելի աղքատ է:

Ո՜վ խղճմտանքի քաղցր հանգստություն, դու, որ իմ սիրտն ու հոգին սերտ կապով կապում ես ամենաբարձրյալ արարիչ երկնավոր Հոր հետ, չլինի թե երբևէ ինձնից հեռանաս: Վայ նրան, ով Քեզ հիշում է միայն այն ժամանակ, երբ ամեն բան կորցրել է, վայ նրան, ում աչքերն այն ժամանակ են լավագույն աշխարհը տեսնում, երբ այս աշխարհն իր աչքից անհետանում է:

Աստված իմ, երբ ժամանակը գա, ինձ ևս մի օր քեզ մոտ պետք է կանչես: Երանի ինձ, եթե այդ ժամանակ կարողանամ ասել, թե լավ պատերազմը պատերազմեցի, որքան որ իմ ուժը հասավ. մի բարեբեր կյանք եմ ունեցել, ինձ ևս մնում է ստանալ հավիտենական կյանքի պսակը:

Երբ կյանքիս վերջին ժամն ինձ կտա մահվան բոլոր դառնությունների, փորձության վերջին բաժակը, երբ իմ փայտացած ձեռքերը չեն կարողանա օրհնել իմ սիրելիներին, որոնք իմ հոգին ավանդելու բարձի վրա աղի արտասուք են թափում իմ հեռանալու համար, երբ իմ բերանը փակված է, և էլ չեմ կարողանա իմ վերջին շնորհակալության խոսքը կմկմալով ասել նրանց, աշխարհի ձայնն ու մարդու սրտին ախորժելի ձայներն ականջներս այլևս չեն լսելու: Այդ ժամանակ Քո ձեռքը կավանդեմ իմ հոգին: Ուրախ և գոհ սրտով դեպի վեր կուղղեմ իմ փակվող աչքերը և Քո ողորմությանը կհանձնեմ բոլոր նրանց, ովքեր թանկ են իմ սրտին:

«Արարատ» ամսագիր, 1882, թիւ 10, էջ 309–319

Փոխադրությունը՝
Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
և Արամայիս սրկ. ԱԶԻԶՅԱՆԻ

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դմիտրի Լիխաչով. ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ 2022, թիվ 19 – 2023, թիվ 10, 15–17

Նամակ քառասուներորդ
ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիշողությունը լինելության կարևորագույն հատկություններից մեկն է. ցանկացած լինելության՝ նյութական, հոգևոր, մարդկային...

Թղթի թերթը: Ճմռթեք այն և ուղղեք: Նրա վրա ծալքեր կմնան, և եթե երկրորդ անգամ այն ճմռթեք, ծալքերի մի մասը կհամընկնի նախորդ ծալքերին. թուղթը «հիշողություն ունի»...

Հիշողություն ունեն առանձին բույսերը, քարը, որի վրա մնում են նրա ծագման և սառցե դարաշրջանում շարժման հետքերը, ապակին, ջուրը և այլն:

Բնափայտի հիշողության վրա է հիմնված ամենաճշգրիտ՝ վերջերս հնագիտական հետազոտություններում (այնտեղ, որտեղ բնափայտ են հայտնաբերում) հեղափոխություն կատարած հատուկ հնաբանական գիտակարգը՝ դենդրոխրոնոլոգիան («դենդրոս» հունարեն նշանակում է ծառ, դենդրոխրոնոլոգիա՝ ծառի ժամանակաշրջանը որոշող գիտություն):

Թռչուններն օժտված են ցեղային հիշողության բարդագույն ձևերով, որոնք նրանց նոր սերնդին անհրաժեշտ ուղղությամբ դեպի անհրաժեշտ վայր թռիչքներ կատարելու հնարավորություն են տալիս: Այդ թռիչքների բացատրության համար միայն թռչունների օգտագործած «ճանապարհաուղղորդման եղանակները և ձևերը» ուսումնասիրելը բավարար չէ: Ամենից կարևորը հիշողությունն է, որը նրանց ստիպում է ձմեռելու և ամառն անցկացնելու համար միշտ միևնույն վայրը փնտրել:

Իսկ ինչ կարող ենք ասել «գենետիկ հիշողության» մասին, հիշողության՝ ամփոփված դարերում, հիշողության՝ փոխանցվող կենդանի էակների մի սերնդից մյուսին:

Ընդ որում՝ հիշողությունն ամենևին էլ մեխանիկական չէ: Այն ստեղծագործական կարևորագույն գործընթաց է. հենց գործընթաց և հենց ստեղծագործական: Հիշվում է այն, ինչ անհրաժեշտ է. հիշողության ճանապարհով կուտակվում է բարի փորձառություն, ձևավորվում է ավանդույթ, մշակվում են կենցաղային, ընտանեկան, աշխատանքային հմտություններ, հասարակական ինստիտուտներ...

Հիշողությունը դիմակայում է ժամանակի կործանարար ուժին:

Հիշողության այս հատկությունը չափազանց կարևոր է:

Ընդունված է ժամանակը պարզունակ կերպով բաժանել անցյալի, ներկայի և ապագայի: Սակայն հիշողության շնորհիվ անցյալը մուտք է գործում ներկա, իսկ ապագան ասես կանխագուշակվում է ներկայով՝ անցյալի հետ միավորված:

Հիշողությունը ժամանակի հաղթահարումն է, մահվան հաղթահարումը:

Դա է հիշողության մեծագույն բարոյական նշանակությունը: «Հիշողություն չունեցողը» նախևառաջ անշնորհակալ, անպատասխանատու, հետևաբար նաև՝ բարի, անշահախնդիր գործերի անընդունակ մարդն է:

Անպատասխանատվությունը ծնվում է այն գիտակցության բացակայությունից, որ ոչինչ անհետ չի կորչում: Վատ արարք գործած մարդը մտածում է, որ այդ արարքը չի պահպանվի իր և իրեն շրջապատողների հիշողության մեջ: Նա ինքն ակնհայտորեն սովոր չէ պահպանել անցյալի հիշողությունը, երախտագիտություն տածել նախնյաց, նրանց աշխատանքի, հոգսերի հանդեպ, և այդ պատճառով մտածում է, որ իր մասին ևս ամեն ինչ կմոռացվի:

Խիղճը հիմնականում հիշողությունն է, որին միանում է արարքի բարոյական գնահատականը: Բայց եթե արարքը չի պահպանվում հիշողության մեջ, ապա չի կարող լինել նաև գնահատական: Առանց հիշողության՝ չկա խիղճ:

Ահա թե ինչու է այդքան կարևոր դաստիարակվել հիշողության բարոյական մթնոլորտում՝ ընտանեկան, ժողովրդական, մշակութային հիշողության: Ընտանեկան լուսանկարները՝ երեխաների, ինչպես նաև մեծահասակների բարոյական դաստիարակության կարևորագույն «տեսողական ձեռնարկներից» են: Հարգանք մեր նախնիների աշխատանքի, նրանց աշխատանքային ավանդույթների, գործիքների, սովորույթների, երգերի ու զվարճանքների հանդեպ: Այս ամենը թանկ է մեզ համար: Եվ պարզապես հարգանք նախնիների շիրիմների նկատմամբ: Հիշենք Պուշկինի տողերը.

Հրաշալիորեն մեզ հետ է երկու զգացում,
Որոնցում սիրտն իր կերակուրն է գտնում՝
Սեր առ հայրենի տունը լքված,
Սեր առ շիրիմքը մեր նախնյաց:
Կենսապարգև սրբություն,
Երկիրն առանց նրանց կլիներ մեռած:

(թարգմ.՝ Հ. Վահանյանի)

Պուշկինի քնարերգությունն իմաստուն է. նրա բանաստեղծությունների յուրաքանչյուր բառ ստիպում է խորհրդածել: Մեր գիտակցությունը չի կարող անմիջապես վարժվել այն մտքին, որ երկիրը մեռած կլիներ առանց նախնիների շիրիմների, առանց լքված հայրենի տան նկատմամբ սիրո: Մահվան երկու խորհրդանիշ, և հանկարծ՝ «կենսապարգև սրբություն»: Շատ հաճախ մենք անտարբեր կամ նույնիսկ գրեթե թշնամաբար ենք վերաբերվում անհետացող գերեզմանոցներին և լքված տներին՝ մեր ոչ այնքան իմաստուն մռայլ մտքերի և մակերեսորեն ծանր տրամադրությունների երկու աղբյուրներին: Ինչպես մարդու անձնական հիշողությունը ձևավորում է նրա խիղճը, նրա խղճամիտ վերաբերմունքն իր սեփական նախնիների և մերձավորների՝ հարազատների ու ընկերների, հին ընկերների նկատմամբ, այսինքն՝ ամենահավատարիմների, որոնց հետ նրան կապում են ընդհանուր հիշողությունները, այնպես էլ ժողովրդի պատմական հիշողությունը ձևավորում է բարոյական այն մթնոլորտը, որտեղ ապրում է ժողովուրդը: Հնարավոր է, թերևս, կարելի էր մտածել մի ինչ-որ այլ բանի վրա բարոյականություն կառուցելու մասին. ամբողջովին անտեսել անցյալը՝ սխալներով և ծանր հիշողություններով հանդերձ, և ամբողջությամբ նպատակաուղղվել դեպի ապագան, կառուցել այդ ապագան ինքն իր «ողջամիտ հիմքերի վրա», մոռանալ անցյալի մասին՝ իր խավար ու լուսավոր կողմերով հանդերձ:

Այդ ոչ միայն անհրաժեշտ չէ, այլև անհնար է: Անցյալի վերաբերյալ հիշողությունն ամենից առաջ «լուսավոր» է (Պուշկինի արտահայտությունն է), բանաստեղծական է: Այն գեղագիտորեն է դաստիարակում:

Մարդկային մշակույթն իր ամբողջության մեջ ոչ միայն հիշողություն ունի, այլև այն գերազանց հիշողություն է: Մարդկության մշակույթը մարդկության գործուն հիշողությունն է՝ եռանդուն կերպով ներմուծված արդիականության մեջ:

Պատմության մեջ յուրաքանչյուր մշակութային վերելք այս կամ այն կերպով կապված էր անցյալին անդրադառնալու հետ: Քանի՞ անգամ է մարդկությունը, օրինակ, իր հայացքն ուղղել դեպի անտիկ ժամանակները: Համենայնդեպս եղել է չորս մեծ, դարակազմիկ անդրադարձ. Կառլոս Մեծի օրոք, Բյուզանդիայում՝ Պալեոլոգոսների հարստության օրոք, Վերածննդի դարաշրջանում և կրկին՝ ԺԸ դարավերջին և ԺԹ դարասկզբին: Իսկ մշակույթի որքա՞ն «փոքր» անդրադարձներ են եղել անտիկ ժամանակներին՝ հենց նույն միջին դարերում՝ երկար ժամանակ «խավար» համարված (անգլիացիները մինչև այժմ էլ միջնադարն անվանում են “dark âge”): Յուրաքանչյուր անդրադարձ դեպի անցյալը «հեղափոխական» էր, այսինքն՝ այն հարստացնում էր այժմեականությունը, և յուրաքանչյուր անդրադարձ յուրովի էր ընկալում այդ անցյալը՝ անցյալից վերցնելով առաջընթացի համար իրեն անհրաժեշտը: Այդ ես եմ խոսում անտիկ ժամանակներին անդրադառնալու մասին, իսկ ի՞նչ էր տալիս յուրաքանչյուր ժողովրդին անդրադարձն իր սեփական ազգային անցյալին: Եթե դա թելադրված չէր ազգայնամոլությամբ, ժողովուրդներից և նրանց մշակութային փորձառությունից անջրպետվելու նեղ ձգտմամբ, ապա բեղմնավոր էր, քանզի հարստացնում, բազմազանեցնում, ընդլայնում էր ժողովրդի մշակույթը, նրա գեղագիտական ընկալունակությունը: Չէ՞ որ նոր պայմաններում յուրաքանչյուր անդրադարձ հնին միշտ նոր էր:

Զ–Է դարերի Կարոլինգյան վերածնունդը նման չէր ԺԵ դարի Վերածննդին, Իտալական վերածնունդը նման չէ Հյուսիսեվրոպականին: ԺԸ դարավերջի եւ ԺԹ դարասկզբի անդրադարձը՝ սկիզբ առած Պոմպեյում կատարված հայտնագործությունների և Վինքելմանի (1717–1768 թթ.) աշխատությունների ազդեցությամբ, տարբերվում է անտիկ ժամանակների մեր ընկալումից և այլն:

Հետպետրոսյան Ռուսաստանում դեպի Հին Ռուսիա մի քանի անդրադարձ է եղել: Այդ անդրադարձներն ունեին տարբեր կողմեր: Ռուսական ճարտարապետության և սրբապատկերների բացահայտումը Ի դարասկզբին հիմնականում զուրկ էր նեղ ազգայնականությունից և շատ արգասաբեր էր նոր արվեստի համար:

Կցանկանայի Պուշկինի քնարերգության օրինակով ցույց տալ հիշողության գեղագիտական ու բարոյական դերը:

Պուշկինի քնարերգության մեջ հիշողությունը հսկայական դեր է խաղում: Հիշողությունների բանաստեղծական դերը տեսանելի է դեռևս Պուշկինի մանկական, պատանեկան տարիների բանաստեղծություններում, որոնցից ամենակարևորը «Հիշողություններ Ցարսկոյե Սելոյում» ստեղծագործությունն է, սակայն հետագայում հիշողությունների դերը շատ մեծ է ոչ միայն Պուշկինի քնարերգության մեջ, այլև նույնիսկ՝ «Եվգենի Օնեգին» պոեմում:

Երբ Պուշկինին անհրաժեշտ է լինում կատարել քնարական տարրի ներմուծում, նա հաճախ դիմում է հիշողություններին: Ինչպես հայտնի է, 1824 թվականի ջրհեղեղի ժամանակ Պուշկինը չի գտնվել Պետերբուրգում, սակայն այնուամենայնիվ «Պղնձե հեծյալը» պոեմում ջրհեղեղը գունավորված է հիշողությամբ.

Սարսափելի ժամանակ էր:
Հուշը թարմ է էսօրվա պես...

(թարգմ.՝ Ռ. Դավոյանի)

Պուշկինն իր պատմական ստեղծագործությունները նույնպես գունավորում է անձնական, տոհմական հիշողության բաժնով: Հիշեք՝ «Բորիս Գոդունով»-ում գործում է նրա նախնի Պուշկինը, «Պետրոս Մեծի Արապը» երկում նույնպես նրա նախնին է՝ Հանիբալը:

Հիշողությունը խղճի ու բարոյականության հիմքն է, հիշողությունը մշակույթի հիմքն է՝ մշակույթի «ամբարումների», հիշողությունը քնարերգության հիմքերից մեկն է՝ մշակութային արժեքների գեղագիտական ըմբռնումի: Հիշողության պահպանումը, հիշողության պաշտպանումը մեր բարոյական պարտքն է ինքներս մեր և հետնորդների նկատմամբ: Հիշողությունը մեր հարստությունն է:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը՝
Տ. Անդրեաս վրդ. ԵՂԵԿՅԱՆԻ

Հայացք դարի բարձունքից

Սկիզբը՝ թիվ 11–12, 15

Երբ ավարտեցինք պտույտը մեր մառաններում, տեխնիկական գիտությունների թեկնածու Հասմիկ Ասլամազյանը մեզ գրական հիանալի անակնկալ մատուցեց՝ շատ տեղին և ժամանակին հիշելով Պարույր Սևակի «Հայաստան» բանաստեղծության այս տողերը.

Դու՝ մրգերի շտեմարան,
Ոսկեվազյան գինու մառան...

...Խնջույքը Բ. Քոլոզյանի հմուտ, թումանյանավայել սեղանապետությամբ և «զվարճախոս» մաճառի ներգործուն «աջակցությամբ» շատ ուրախ ու աշխույժ անցավ: Այն և՛ հացիվ էր, և՛ մանավանդ բանիվ՝ համեմված հումորով, սրտաբաց ու սրամիտ խոսքուզրույցով: Սեղանը նաև բարեպատեհ առիթ էր, որ արվեստաբան-պրոֆեսորը գործընկերներին երես առ երես ասեր սրտում վաղուց կուտակվածը...

Դեռևս վաղ ուսանողական տարիներից ծանոթ ու մտերիմ լինելով գեղանկարչուհի քույրերին և աչքի առջև ունենալով նրանց շուրջ կեսդարյա բեղմնավոր ստեղծագործական ուղին ու թռիչքային աճը՝ Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի գեղանկարչության ամբիոնի երկարամյա վարիչը (և մեր այդօրվա մեծաշնորհ սեղանապետը) ըստ պատշաճի գնահատեց, բնութագրեց և արժևորեց Ասլամազյան քույրերի արևոտ արվեստը, ստեղծագործությունների հայրենաշունչ թեմատիկան, հայրենական կերպարվեստում ներդրած ակնառու ավանդն ու սերունդներին արդեն իսկ թողած հարուստ, ուսանելի պատգամները: Պրոֆեսորը վերջում հաճույքով և արժանապատվորեն իրազեկեց, որ դեկորատիվ գեղանկարչության բնագավառում Մարիամ և Երանուհի Ասլամազյանների անհատականությունը, նրանց ստեղծագործությունների ինքնատիպ ոճը և շատ ու շատ այլ յուրահատկություններ, որպես ուսանելի, մեթոդական նյութ, ընդգրկվել են ինստիտուտի գեղանկարչական արվեստ դասավանդվող առարկայի ծրագրերում:

Բոլորս հիացանք Բ. Քոլոզյանի բարձր, հոգեհաճո գնահատականքից, հասցեատերերը՝ առավելաբար...

Շուտով Բ. Քոլոզյանն այսպիսի մի խոսք բացեց. «Սիրելի՛ Մարիամ, արդյոք «վերևներում» շատ չե՞ն ուշացնում Ձեզ ԽՍՀՄ ժողովրդական նկարչի պատվավոր կոչման շնորհումը, ախար աչքներս ջուր դառան, սրտներս էլ հուր դառան՝ Գերագույն խորհրդի էդ հրամանագրին սպասելով»: Թեև հարցը կատակախառն հրամցվեց, սակայն իրականում այն... զգայուն էր... Մ. Ասլամազյանը, հուզմունքը սքողելով, ուղղակի պատասխանեց, որ Կրեմլում ազգայնամոլ չինովնիկներ կան (հատկապես հանձին հայ ազգի՝ իրենց մշտական մրցակից տեսնողներից...), որոնք կոչման հրամանագրի ներկայացված ցուցակից իր ազգանունը քանիցս հանել կամ փոխարինել են յուրայիններով... «Ես էլ որոշել եմ դրանց «ջգրու» այնքան երկար ապրել, որ դրանք էդ ոլորտներից վերանան... (փակագծում նշեմ, որ Մ. Ասլամազյանը, ի վերջո, այդ պատվավոր, բարձր կոչմանն արժանացավ 1990 թվականին, երբ արդեն պատկառելի տարիքում էր՝ 83-ում... Հավանաբար «վերևներում» դաշտը մոլախոտերից արդեն «մաքրված» էր...):

Խնջույքը եզրափակող վերջին ավանդական գավաթով հյուրերն օջախին բարգավաճում մաղթեցին, իսկ Մ. Ասլամազյանը հատուկ շնորհակալություն հայտնեց իր «Հեղինե մայրիկին»:

Ի բնե հյուրամեծար, զուսպ, միշտ գեղջկական ամոթխած կեցվածքով մայրս «Հեղինե մայրիկ» դիմելաձևից, զգում էի, նեղվում էր, բայցև քթի տակ ներողամտորեն դարձյալ ժպտում...

Երբ հյուրերն արդեն ոտքի վրա էին, մայրս միայն ինձ լսելի, կամացուկ «բողոքեց». «Ես «Մարիամ քույրիկ»-ով եմ իրեն դիմում, իսկ նա ինձ՝ «մայրիկ»-ով... չէ՞ որ ինքն ինձանից մի տասը տարով հաստատ մեծ կլինի»...

Չգիտեմ՝ աննրբանկատությո՞ւն էր արդյոք, թե՞ ոչ՝ ես մորս տրտունջը... բարձրաձայնեցի... Մայրս իսկույն շիկնեց... Մարիամ Ասլամազյանն էլ իր «մայրիկ» դիմելաձևն այսպես բացատրեց.

— Ութ զավակ աշխարհ բերողին բարոյական պարտքս եմ համարում Մայրիկ ասել պատկառանքով ու մեծարանքով... Մինչդեռ ինքս երկու ամուսնությունից մեկ զավակ անգամ չունեցա... անիծյալ պատերազմը խանգարեց ու... մայր կոչվելու մեծագույն պատվին այդպես էլ չարժանացա...

Անկեղծ խոստովանանքը սրտաշարժ էր... Մայրս խորապես զգացված մոտեցավ, ջերմագին փարվեց Մ. Ասլամազյանին ու մխիթարիչ համբույր դրոշմեց նրա վեպ, ազնվական ճակատին...

— Մարիա՛մ քույրիկ, — խոսեց հուզված՝ ի խորոց սրտի, — հիմա Դուք ավելի շատ հոգուս մեջ մտաք... ես Ձեզ ավելի շատ սիրեցի...

Սրտագին հրաժեշտին մայրս հյուրերի հետ մի-մի զամբյուղ ընտրագույն՝ շողոտ-շաղոտ մրգեր դրեց:

— Շնորհակալություն,— ասացին բոլորը, իսկ քույրերից Երանուհին իր և ավագ քրոջ անունից խոստացավ ճաշակելուց առաջ մրգերը նկարել և դրանով իսկ արժանավույնս «անմահացնել» նատյուրմորտներում:

Երևան մեկնելուց առաջ Մ. Ասլամազյանը ցանկացավ կարճատև այցելել Ոսկեվազի կոլտնտեսության նախկին նախագահ Սուրեն Աթանեսյանի տուն: Ասաց, որ 1951 թվականին այդ տան կտուրից նկարած «Աշունը Ոսկեվազում» բնանկարը գնել է Դրեզդենի պատկերասրահը, ափսոսում է, որ այն «ձեռքից հանել» է, իսկ հիմա նպատակ ունի տանտերերի հետ պայմանավորվել և առաջիկայում նույն կտուրից նկարել աշնանային Ոսկեվազը և այդ կտավով ևս համալրել իր անձնական հավաքածուն:

Հանդիպեցինք: Անցել էր ուղիղ 27 տարի: Տան՝ արդեն տարեցներն իսկույն ճանաչեցին ստեղծագործելու նպատակով իրենց տանը բնակված «մեր հին, ազնիվ, անմոռանալի բարեկամ քույրիկներ»-ին:

Բարձրացանք ձեղնահարկ: Գեղանկարչուհին կտուրից երկար դիտարկեց մինչև վեհանիստ Արարատ փռված հիասքանչ աշնանային համայնապատկերը, արևոտ երկրի ծիածանվող կախարդիչ գունաշխարհը, սակայն որոշեց... չնկարել. հիսունական թվականների բնապատկերը հիմնովին փոխվել էր: Խիստ նոսրացել էին գյուղի գլխավոր հեռապատկերը կազմող նաիրյան սլացիկ բարդիները՝ արագիլների բներն էլ վրան, իսկ նախկին ցածրահարկ, խոտի դեզերով, հողե տափակ կտուրներով տների տեղերում բարձրացել էին երկհարկանի գեղեցիկ, թիթեղածածկ տանիքներով առանձնատներ, ամբողջապես նոր թաղամասեր... Ճշմարիտ է՝ չի նկարելու, սակայն գեղանկարչուհին ակներև ուրախ էր հայկական շենի այսպիսի կենսավառ բարեփոխության համար: Եվ ինչպե՞ս ուրախ չլինել՝ սիրելի ու միշտ բաղձալի հայրենիքը բարգավաճում է մեծաթռիչք...

Ավտոմեքենայով շրջեցինք գեղանկարչուհի քույրերի վաղեմի ծանոթ գյուղի հին թաղամասերում: Եղանք նաև Օշականում...

— Օ՜, ի՞նչ լավ է, որ այսքան շատ պահպանվել են հարյուրամյա և ավելի հնության տների կամարակապ, փայտե դռներով մուտքերը: Սքանչելի է...

Գեղագետ քույրերը և Բ. Քոլոզյանը գոհունակությամբ նշեցին նաև այն իրողությունը, որ մեր շատ գյուղերում ժողովրդական բնակելի նոր տներ կառուցելիս կամ նախկինը վերակառուցելիս հաջողությամբ պահպանում ու ներդաշնակում են հայ ճարտարապետության ավանդական ու արդիական ոճերը: Սակայն ընդհանուր այս հաճելի տպավորությունը խաթարում են երկաթյա դարպասներն ու դռնակները, որոնք օտար, սառն ու խորթ տարրեր են՝ անհարիր ժողովրդական բնակելի տան կառուցման մեր սկզբունքներին:

Հասանք Երևան, «Բարի գիշեր» մաղթեցինք միմյանց՝ յուրաքանչյուրս մեր հոգում ծրարելով ոսկե աշնան գույներով հագեցած բովանդակալից ու հիշարժան օրը...

...Ժամանակի սլացքով տասնամյակներ են անցել: Ժամանակի հետ էլ, վաղուց անտի ասված փիլիսոփայական խոսք է, ամեն ինչ հոսում է, ամեն ինչ՝ փոփոխվում: Այլևս չկա իմ անմոռաց բարեկամ, շնորհաձին երևելի կին գեղագետ Մարիամ Ասլամազյանը...

Ժամանակ առ ժամանակ, սրտիս թելադրանքով, իմ գրադարանում բացում եմ այն հաստլիկ թղթապանակը, որի մեջ, որպես թանկագին մասունքներ, ամփոփված են գեղանկարչուհու ստեղծագործությունների պատկերագրքերը, բացիկ-վերատպություններ, մեր լուսանկարները, նամակներ, տոների առթիվ իմ ընտանիքի բոլոր անդամներին նրա շնորհավորանքները՝ գրված ռուսերեն և հայերեն՝ իր մանուկ օրերում սովորած հին ուղղագրությամբ... Թղթապանակում են նաև ամսագրերի ու լրագրերի այն օրինակները, ուր տպագրված են Մարիամ և Երանուհի Ասլամազյանների մասին իմ գրած հոդվածներն ու ակնարկները:

Թղթապանակը պարբերաբար նայելու հոգեկան մեկ պահանջմունք էլ ունեմ. Մ. Ասլամազյանի պատկերագրքերում վերատպված կտավներում տեսնում եմ նաև գեղարվեստորեն «վավերագրված» հին օրերի (նաև իմ մանուկ օրերի...) կյանքը՝ հայկական բնակավայրեր ու փողոցներ, բնապատկերներ, մեր նախորդ սերնդի՝ այսօրվա համար, երևի թե տարօրինակ, անհարիր թվացող հագուստ-կապուստը, ջինջ հայացքներ, ժամանակի ու միջավայրի կոլորիտը և ինչ-որ չափով մեր մոռացված, կորուսյալ, քաղցր անցյալը... Անշուշտ, սա էլ ինքնին, թող ներվի նկատել՝ պատմական-ճանաչողական արժեք է...

Բոլոր ընծայագրերն սկսվում են «Բարի հիշատակ իմ թանկագին ընկեր ու բարեկամ...»-ով, որոնք հիմա՝ ժամանակի հեռվից, հուզական այլ ընկալում ու խորք ունեն՝ գոնե ինձ համար... Մնացել են սրտի հիշողությունը, սրբանուն Մարիամի պատկերագրած իմ երիտասարդական օրերի դիմանկարը, նվիրական թղթապանակը...

Կոթողի սրբատաշ քարին անմահ խոսք է փորագրել հայ շինարարը. «Ձեռքս գնա, դառնա ի հող, գիրս մնա հիշատակող»:

Հարուստ է Մարիամ Ասլամազյանի ստեղծագործական ժառանգության երփնագիրը. հազարավոր կտավներ, խեցեգործական աշխատանքներ են նրա մեծաշնորհ, քանքարավոր ձեռքի արգասիքը և հենց ուղիղ իմաստով՝ գիրը՝ կյանքի վերջալույսին վայելչագրած «Կյանքիս դավթարը» գիրքը...

Շարունակելի

Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Աստվածաշունչ՝ գիրք գրոց

ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ ՊԷՏՔ Է ՀԵՏԱՄՈՒՏ ԼԻՆԵՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

Լուսաւոր եւ անթառամ է իմաստութիւնը, դիւրին է յայտնւում իրեն սիրողներին եւ հեշտ է գտնւում փնտռողներից: Նա ինքն է հասնում իրեն ցանկացողներին՝ ուրախ շուտ ճանաչուելու համար: Ով վաղ է ելնում նրան փնտռելու, նա չի չարչարուի, որովհետև դեզերելիս կը գտնի այն իր դռան ծոտ: Նրա մասին մտածելն արդէն կատարեալ իմաստութիւն է, եւ ով գթնում է նրա համար, շատ շուտ էլ կը թեթևանայ հոգսից: Արդարև, իմաստութիւնն ինքն է շրջում՝ գտնելու իրեն արժանի եղողներին, եւ քաղցրութեամբ յայտնուելով նրանց շաւիղների վրայ, ինքն է նրանց դալիս ամէն մի հնարագիտութիւն: Իմաստութեան սկիզբը իմաստութիւն ստանալու ճշմարիտ ցանկութիւնն է. իսկ ստանալու ցանկութիւնը նրա նկատմամբ տածած սէրն է, նրա օրէնքների պահպանութիւնը գուրթն է, նրա օրէնքների իւրացումը՝ անեղծութեան հաստատունութիւնը: Իսկ անեղծութիւնը մարդուն մօտեցնում է Աստծուն, եւ իմաստութեան ցանկութիւնը տանում է դէպի արքայութիւն:

Իմաստութիւն Սողոմոնի

Աստվածաշունչը և հնագիտությունը

➥ էջ 5

Այս առումով նվազ կարևոր չեն նաև բազմաթիվ հեթանոս հեղինակների արժանահավատ վկայությունները նույն Մովսեսի՝ հոգուտ Հնգամատյանի հեղինակության: 4-րդ դ. եգիպտացի պատմիչ Մանեթոնը հիշատակում է Մովսեսին՝ իբրև հրեա ժողովրդի օրենսդրի: Ընդ որում՝ եգիպտոսի պատմությունը մատենագրելիս պարզիպարզո խոստովանում է, որ օգտվել է եգիպտական հնագույն աղբյուրներից: Թեոդորոս Սիկիլացին և Ապիոնը, խոսելով Մովսեսի մասին, նույնպես վկայում են, որ իրենց տեղեկությունները քաղել են եգիպտական քրմերից: Հույն հեղինակներից կարելի է նաև վկայակոչել Պոլեմունին՝ աթենացի փիլիսոփային և Եվպոլիմին, որը Ք. ա. մոտ 200 թ. Մովսեսին անվանում է իմաստուն և հրեաներին սրբազան գրքեր շնորհող: Ստրաբոնն առանձնակի հարգանքով և դրվատանքով է արտահայտվում թե՛ Մովսեսի, թե՛ նրա կրոնական ուսմունքի մասին: Սուրբ մարգարեներին հիշատակել են նաև հույն և հռոմեացի այլ հեղինակներ՝ Պոմպեոս Տրոգոսը, Տակիտոսը, Յուվենալը և այլք:

Աստվածաշունչը գիտական ձեռնարկ չէ, նրա խորին խորհուրդը նախածնողների պատվիրանազանցության և ծնողներից զավակներին սերնդեսերունդ փոխանցվող մարդու ներաշխարհի ներդաշնակության, հոգևոր բնության խաթարման, մեղքի, տառապանքի և մահվան առաջացման մասին է, որն ի հայտ է գալիս մանկուց՝ չարի ու մեղքի նկատմամբ հակվածությամբ (Ծնն. Ը 21):

Ուսուցանելով ազատվել այս ժառանգական չարությունից՝ Սուրբ Գիրքն իր բարձրագույն պատգամն է հռչակում ի Քրիստոս փրկության վերաբերյալ, իսկ մարդը, հետևելով Աստծու այս կանչին, պետք է իր միտքը տա իմաստությանն ու ճշմարտությանը, կամքը՝ աղոթքով, պահքով, ապաշխարությամբ և բարի գործերով երկնքի արքայությանը, զգացմունքը՝ սիրուն:

Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 25.03.2024 թ.
Տպաքանակը՝ 1265